

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

*Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի խորհրդի
15.02.2011 թ. թիվ 33 Ա որոշմամբ*

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Գճանի հաշվեհարկում)

2010 թ. 4-րդ եռամսյակ



Բովանդակություն

1. Համառոտագիր	5
2. Գնաճի զարգացումներ	7
2.1. Գնաճն ըստ ապրանքների և ծառայությունների խմբերի, բնականոն գնաճ	7
<i>Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն</i>	8
2.2. Գնաճի նպատակի իրագործում.....	12
3. Գնաճի գործոններ	15
3.1. Արտաքին միջավայր	15
3.2. Վճարային հաշվեկշիռ	22
3.2.1. <i>Ընթացիկ հաշիվ</i>	22
3.2.2. <i>Կապիտալի և ֆինանսական հաշիվ</i>	23
3.3. Տոկոսադրույքներ, փոխարժեք և դրամավարկային զարգացումներ	24
3.3.1. <i>Տոկոսադրույքներ</i>	24
3.3.2. <i>Փոխարժեք</i>	27
3.3.3. <i>Դրամավարկային զարգացումներ</i>	29
3.4. Համախառն պահանջարկ և առաջարկ	32
3.4.1. <i>Համախառն պահանջարկ</i>	32
3.4.2. <i>Համախառն առաջարկ</i>	35
3.5. Աշխատանքի շուկա	37
3.6. Ներմուծման գներ և արտադրողների գներ	37
3.6.1. <i>Ներմուծման գներ</i>	37
3.6.2. <i>Արտադրողների գներ</i>	39
3.7. Գնաճի սպասումներ	40

1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱՑԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

2010 թվականի մակրոտնտեսական զարգացումների հիմնական առանձնահատկությունը բարձր գնաճային միջավայրի ձևավորումն էր: Վերջինս պայմանավորող հիմնական գործոններից էր միջազգային շուկայում պարենային ապրանքների գների կտրուկ աճը (Համաշխարհային բանկի պարենի ինդեքսը 2010թ. աճել է 25.3%-ով), որին մեծապես նպաստել է հացահատիկի գնի տարեկան 48.6%, արևածաղկի ձեթի գնի 47.5% և շաքարավազի գնի 42.8% աճը: Գնաճային մյուս գործոնը գյուղատնտեսության ճյուղի խորը անկումն էր, ինչի հետևանքով կտրուկ նվազել է գյուղմթերքների առաջարկը, և արձանագրվել է տեղական արտադրության գյուղատնտեսական ապրանքների գների թռիչքային աճ. «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբի գներն աճել են տ/տ 30.7%-ով, «Միրգ» ապրանքախմբինը՝ 19.0%-ով, «Մսամթերք» ապրանքախմբինը՝ 17.6%-ով: 2010 թվականին ևս մեկ գնաճային գործոն էր ապրիլից գազի և ջրի սակագների բարձրացումը: Միաժամանակ, տարվա ընթացքում ներքին պահանջարկի դանդաղ տեմպերով վերականգնումը լրացուցիչ գնաճային ճնշումներ չի ստեղծել:

Նկարագրված միջավայրում 2010 թվականի ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 9.4% գնաճ, որի միայն 7.5 տոկոսային կետը պարենային ապրանքների գների աճի հաշվին էր, ընդ որում՝ ներքին գյուղատնտեսական ապրանքների գների աճի հաշվին արձանագրվել է շուրջ 5 տոկոսային կետ գնաճ և ավելի քան 2 տոկոսային կետ գնաճ արձանագրվել է ներմուծվող պարենային ապրանքների գների աճի հաշվին: 2010 թվականի հունվար-դեկտեմբերի միջին գնաճը նախորդ տարվա միջինի նկատմամբ կազմել է 8.2%:

2010 թվականի հունվար-դեկտեմբերին տնտեսական աճը, ինչպես և ակնկալվում էր, կազմել է տ/տ 2.6%: Ինչպես չորրորդ եռամսյակում, այնպես էլ ողջ տարվա ընթացքում տնտեսական աճին մեծապես նպաստել են ծառայությունների և արդյունաբերության ճյուղերը: Արդյունաբերության, ծառայությունների և շինարարության ճյուղում հունվար-դեկտեմբերին արձանագրվել է ավելացված արժեքի համապատասխանաբար տ/տ 9.5%, 4.6% և 3.7% աճ, մինչդեռ գյուղատնտեսության ճյուղում արձանագրվել է խոշոր անկում՝ տ/տ 13.4%:

2010 թվականի ընթացքում նկատվել է աշխատանքի շուկայի ցուցանիշների բարելավում: Պաշտոնապես զրանցված գործազրկության միջին եռամսյակային մակարդակը նվազել է՝ արտահայտելով աշխատուժի նկատմամբ պահանջարկի ավելացումը: 2010 թվականին անվանական աշխատավարձերի աճը փոքր-ինչ գերազանցել է աշխատանքի արտադրողականության աճը՝ հանգեցնելով միավոր աշխատուժի ծախսերի որոշակի աճի: Արդյունքում՝ տարվա ընթացքում տնտեսությունում առաջացել են թույլ գնաճային ճնշումներ՝ շուրջ 0.3 տոկոսային կետի չափով:

2010 թվականի ընթացքում մասնավոր հատվածի ծախսումները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 4%-ով: Պետական ծախսումների բարձր դեֆլյատորի պարագայում պետական ծախսումներն իրական արտահայտությամբ նվազել են մոտ 3%-ով, արդյունքում՝ ներքին պահանջարկը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 3%-ով: Մասնավոր ծախսումների կազմում մասնավոր սպառումն ավելացել է շուրջ 6%-ով, իսկ մասնավոր ներդրումների ծավալները նախորդ տարվա համեմատ մնացել են անփոփոխ:

Չնայած 2010 թվականի ընթացքում մասնավոր ծախսումներն ավելացել են, սակայն գնաճի վրա ունեցել են զսպող ազդեցություն: Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ մասնավոր հատվածի իրական ծախսումները տարվա ընթացքում 0-3% ցածր են եղել հավասարակշիռ մակարդակից՝ սպառողական շուկայում առաջացնելով գնանկումային ճնշումներ 0.2 - 0.9 տոկոսային կետի չափով:

2010 թվականին համախառն պահանջարկի, հետևաբար գնաճի վրա հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է կանխատեսվածից ավելի մեծ ընդլայնող ազդեցություն, որի պարագայում հարկաբյուջետային ազդակի գնահատված ցուցանիշը կազմել է 3.5 տոկոսային կետ: Ընդ որում՝ եկամուտների ազդակը կազմել է 0.4 զսպող, իսկ ծախսերինը՝ 3.9 տոկոսային կետ ընդլայնող:

Ներքին պահանջարկի և աշխատանքի շուկայի՝ վերը նշված զարգացումների պայմաններում տնտեսությունում տարվա ընթացքում նկատվել են որոշակի գնաճային ճնշումներ, որոնք, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, կազմել են 0.5 – 0.8 տոկոսային կետ:

2010 թ. ընթացքում համաշխարհային և ներքին տնտեսությունների զարգացումների պայմաններում ընթացիկ հաշիվը բարելավվել է: Տարվա վերջին եռամսյակում հատկանշական է եղել հիմնական մետաղների միջազգային գների աճի տեմպերի արագացումը, ինչը գերազանցել է սպասումները: Վերջինս արդյունաբերության ճյուղում աճի բարձր տեմպերի պահպանման պարագայում վառ դրսևորվել է տարեվերջին արտահանման դոլարային աճի տեմպերի արագացմամբ: Ներմուծման բարձր աճը պահպանվել է առաջին կիսամյակում, իսկ երկրորդ կիսամյակից սկսած՝ ներմուծման աճի տեմպերը կտրուկ դանդաղել են, ինչը պայմանավորվել է տնտեսավարող սուբյեկտների բյուջետային սահմանափակման պայմաններում ներմուծման գների աճի տեմպերի արագացմամբ: Նշված զարգացումների արդյունքում ընթացիկ հաշիվը բարելավվել է և կազմել ՀՆԱ մոտ 14.0%-ը՝ նախորդ տարվա 16.2%-ի փոխարեն:

Վերոնշյալ զարգացումներով էլ պայմանավորվել են գնաճի նպատակի իրագործման ընթացքը և դրամավարկային քաղաքականության ուղղությունները տարվա ընթացքում: Տարվա առաջին կեսին դրամավարկային պայմանների խստացման (վերաֆինանսավորման տոկոսադրույքի 2.25 տոկոսային կետով բարձրացում) և ապադոլարայնացման միջոցառումների իրականացման արդյունքում ԿԲ-ին հաջողվել է 12-ամսյա գնաճը մոտեցնել նպատակային միջակայքի վերին սահմանին: Սակայն հունիսից իրավիճակը կտրուկ փոխվել է. գնաճի զարգացումների վրա էական ներգործություն են ունեցել դրսևորված առաջարկի շուկի՝ գյուղատնտեսության ճյուղի խորը անկման հետևանքով գյուղմթերքների առաջարկի կտրուկ նվազման ու գների թռիչքային աճի և միջազգային շուկայում պարենային ապրանքների գների կտրուկ աճի ազդեցությունները: Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջարկի գործոնները ենթակա չեն դրամավարկային կարգավորման, և որ ըստ գնահատումների՝ հաջորդ տարում ևս քիչ հավանական է այս տարի գյուղատնտեսության ճյուղում արձանագրված միտումների դրսևորումն ու գյուղատնտեսական ապրանքների բարձր գների պահպանումը, ԿԲ-ն տարվա երկրորդ կեսին առավելապես վարել է պահպանողական քաղաքականություն՝ ձեռնպահ մնալով դրամավարկային պայմանների խստացումից: Տարեվերջին, միջազգային պարենային ապրանքների գների աճի տեմպերի արագացման և հետագայում գնաճային ֆոնի ուժգնացման կանխատեսումների պարագայում, ԿԲ-ն իր հրապարակումներում հստակ նշել է դրամավարկային պայմանների խստացման անհրաժեշտության մասին:

2010 թվականի հիմնական առանձնահատկություններով՝ տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացմամբ և իրականացված ապադոլարայնացման միջոցառումներով պայմանավորված՝ տարվա ընթացքում ձևավորվել են դրամավարկային հիմնական ցուցանիշների հետևյալ վարքագծերը. փողի և դրամային զանգվածներն աճել են համապատասխանաբար 11.8 և 15.7%-ով՝ փողի բազայի գրեթե անփոփոխ մակարդակի պարագայում: Դրամային ավանդներն ունեցել են արտարժութային ավանդների համեմատ առաջանցիկ աճ՝ համապատասխանաբար 29.0 և 7.0%, ինչի արդյունքում դոլարայնացման մակարդակը տարվա ընթացքում նվազել է 4.2%-ով: Այդուհանդերձ, դրամավարկային քաղաքականության խստացման պարագայում անգամ 2010 թ. արձանագրվել են տնտեսության վարկավորման բարձր աճի տեմպեր՝ 26.7%, որն ավելի քան երկու անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը, և առավելապես պայմանավորվել է ԿԲ-ում բանկերի արտարժութային թղթակցային հաշիվների ավելցուկային միջոցների և արտերկրից ներգրավված վարկային ռեսուրսների օգտագործմամբ:


2. ԳՆԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2.1. ԳՆԱԾՆ ԸՍՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ, ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱԾ

2010թ. դեկտեմբերին, 2009թ. դեկտեմբերի նկատմամբ, գրանցվել է 9.4% գնաճ, ընդ որում՝ պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) ապրանքների գները բարձրացել են 14.0%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 4.6%-ով, ծառայությունների սակագները՝ 4.2%-ով՝ նպաստելով գնաճին համապատասխանաբար 7.5, 0.7 և 1.3 տոկոսային կետով:

Նպաստումը գնաճի ցուցանիշին, տոկոսային կետ	Ապրանքախմբեր	Գների փոփոխություն, %
Պարենային ապրանքներ		
2.0	Հացամթերք	13.2
1.7	Սաամթերք	17.6
1.4	Բանջարեղեն և կարտոֆիլ	30.7
0.9	Կաթնամթերք	21.1
0.5	Միրգ	19.0
0.5	Չու	25.7
0.4	Կենդանական և բուսական յուղ	10.9
0.1	Շաքարավազ	6.5
Ոչ պարենային ապրանքներ		
0.2	Կոշկեղեն	12.8
0.2	Հագուստ և զործվածք	7.5
0.1	Անձնական օգտագործման մեքենաներ և վառելիք	4.4
Ծառայություններ		
0.7	Բնակարանային, կոմունալ ծառայություններ	9.3
0.3	Բուժապասարկման ծառայություններ	3.5
0.2	Կրթության համակարգի ծառայություններ	5.0
0.1	Այլ կենցաղային ծառայություններ	13.4
-0.2	Տրանսպորտի ծառայություններ	-4.4

Սպառողական գների ինդեքսը 2010 թ. չորրորդ եռամսյակում, 12-ամսյա կտրվածքով՝ ըստ հիմնական ապրանքային խմբերի և ծառայությունների




2010թ. չորրորդ եռամսյակում գնաճը, նախորդ եռամսյակի վերջի նկատմամբ, կազմել է 4.5%, ընդ որում՝ պարենային ապրանքների գները բարձրացել են 8.1%-ով (նպաստումը գնաճին՝ 4.4 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գները՝ 1.5%-ով (նպաստումը գնաճին՝ 0.2 տոկոսային կետ), իսկ ծառայությունների սակագները նվազել են 0.2%-ով (նպաստումը գնաճին՝ -0.1 տոկոսային կետ):

2010թ. հունվար-դեկտեմբերին, 2009թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, գնաճը կազմել է 8.2% (2009 և 2008թթ.՝ համապատասխանաբար 3.4 և 9.0%): Գնաճի 8.2% ցուցանիշը պայմանավորվել է պարենային ապրանքների գների 8.6%, ոչ պարենային ապրանքների 9.6% և ծառայությունների սակագների 6.8% աճով, որոնց նպաստումը գնաճի ընդհանուր ցուցանիշին համապատասխանաբար կազմել է 4.7, 1.6 և 2.0 տոկոսային կետ:

2010թ. չորրորդ եռամսյակում բնականոն գնաճի 12-ամսյա ցուցանիշը աճել է 1.4 տոկոսային կետով և դեկտեմբերի վերջին կազմել է 6.3%: Ընդ որում՝ աճի ուղղությամբ ամենամեծ նպաստումը ունեցել են «Տավարի միս», «Պանիր տնական (կովի կաթից)», «Ձու», «Հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների ծառայություններ», «Պանիր Լոռի», «Կարագ» ապրանքները՝ համապատասխանաբար նպաստելով 1.7, 0.6, 0.6, 0.3, 0.2 և 0.2 տոկոսային կետով, իսկ «Օդային տրանսպորտի ուղեվարձ» և «Ալյուր բարձր տեսակի» ապրանքները նպաստել են -0.2 և -0.05 տոկոսային կետով¹:

Գնաճը և բնականոն գնաճը 2006-2010 թթ. (% , նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ)



Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն

Սպառողական գների ինդեքսի և սպառողական զամբյուղի առանձին ապրանքախմբերի գների ինդեքսների փոփոխությունների ուսումնասիրման և դրանց տատանումները պայմանավորող գործոնների բացահայտման նպատակով 2008 թվականի հունվարից մինչև 2010 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածի համար տարանջատվել և գնահատվել է վիճակագրության տեսության մեջ ընդունված երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը:²

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2008թ. հունվար-2010թ. դեկտեմբեր ժամանակահատվածում ՍԳԻ-ի վրա սեզոնայնության բաղադրատարրի ազդեցությունը կազմել է 70.96%, պատահական բաղադրատարրին՝ 28.59% և տրենդային բաղադրատարրի ազդեցությունը՝ ընդամենը 0.45%, ընդ որում՝ 2007թ. հունվար-2009թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համեմատ նվազել է սեզոնայնության բաղադրատարրի (1.5%-ով) ազդեցությունը և աճել տրենդային (0.4%-ով) ու պատահական բաղադրատարրերի (1.1%-ով) ազդեցությունները:

Պարենային ապրանքների գների ինդեքսի վրա 2008թ. հունվար-2010թ. դեկտեմբեր ժամանակահատվածում շատ մեծ է սեզոնայնության բա-

¹ Բնականոն գնաճի հաշվարկման մանրամասն մեթոդաբանությունը ներկայացված է «ՀՀ ԿՔ բանբեր» պարբերականում (2008 թ. 1-ին եռամսյակ), «Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը ՀՀ-ում. արտաքսման և ճշգրտման եղանակ» վերլուծական նյութում:

² Հաշվարկների մեթոդաբանությունը նկարագրվել է «Գնաճը Հայաստանի Հանրապետությունում. 1999 թ. 2-րդ կիսամյակ» պարբերականում:

ղաղրատարրի ազդեցությունը՝ 74.71%, ընդ որում՝ 2007թ. հունվար-2009թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համեմատ այս բաղադրատարրի ազդեցությունը նվազել է 5.7%-ով:

Ոչ պարենային ապրանքների գների ինդեքսի վրա 2008թ. հունվար-2010թ. դեկտեմբեր ժամանակահատվածում էական ազդեցություն է ունեցել պատահական բաղադրատարրը՝ 63.99%, ընդ որում՝ 2007թ. հունվար-2009թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համեմատ այդ բաղադրատարրի ազդեցությունն աճել է 6.0%-ով:

Ծառայությունների գների ինդեքսի վրա սեզոնայնության բաղադրատարրի ազդեցությունը կազմել է 56.23%, պատահական բաղադրատարրինը՝ 32.62%: 2007թ. հունվար-2009թ. դեկտեմբերի համեմատ սեզոնայնության բաղադրատարրի ազդեցությունն աճել է 12.9%-ով, իսկ պատահական բաղադրատարրինը նվազել է 16.2%-ով:

Ենթաապրանքախմբերի գների ինդեքսների վերլուծությունները ցույց են տալիս, որ 2008թ. հունվար-2010թ. դեկտեմբեր ժամանակահատվածում **սեզոնայնության բաղադրատարրը** ամենամեծն է եղել հետևյալ ենթաապրանքախմբերում՝ «Կրթության համակարգի ծառայություններ» (87.7%), «Միրգ» (82.9%), «Բանջարեղեն և կարտոֆիլ» (79.6%), «Կենդանական և բուսական յուղ» (68.2%): Նույն ժամանակահատվածում **պատահական բաղադրատարրի** ազդեցությունը մեծ է եղել հետևյալ ենթաապրանքախմբերում՝ «Գեղահարդարման ապրանքներ» (78.6%), «Մսամթերք» (78.3%), «Խոհանոցային սպասք» (78.0%), «Կենցաղային էլեկտրաապրանքներ» (75.1%), «Հանրային սննդի ծառայություններ» (72.0%), «Գորգեղեն» (72.0%), «Դեղամիջոցներ» (71.9%) և «Ոսկերչական ապրանքներ» (71.5%): **Տրենդային բաղադրատարրի** ազդեցությունը ընդհանուր առմամբ փոքր է բոլոր ենթաապրանքախմբերում, հետևաբար նաև ՍԳԻ-ում: 2008թ. հունվար-2010թ. դեկտեմբեր ժամանակահատվածում տրենդային բաղադրատարրի ազդեցությունը համեմատաբար մեծ է եղել հետևյալ ենթաապրանքախմբերում՝ «Սուրճ, թեյ, կակաո» (26.3%), «Բուժապասարկման ծառայություններ» (20.7%), «Կաթնամթերք» (12.7%), «Կապի ծառայություններ» (11.5%), «Ոչ ոգելից խմիչքներ» (10.5%):

Գների ամսական ինդեքսների տատանումները պայմանավորող բաղադրատարրերի տեսակարար կշիռները (2008 թ. հունվարից - 2010թ. դեկտեմբեր) (%)


Անվանում	Տրենդ	Սեզոնայնություն	Պատահական տարր	Ընդամենը
ՍԳԻ (նախորդ ամսվա նկատմամբ)	0.45	70.96	28.59	100.0
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	2.27	74.71	23.02	100.0
Հացամթերք	0.001	40.69	59.31	100.0
Մսամթերք	3.25	18.41	78.34	100.0
Չկնամթերք	2.28	30.66	67.05	100.0
Կաթնամթերք	12.74	33.05	54.21	100.0
Չու	8.48	52.96	38.56	100.0
Կենդանական և բուսական յուղ	0.58	68.23	31.19	100.0
Միրգ	0.79	82.87	16.33	100.0
Բանջարեղեն և կարտոֆիլ	0.31	79.55	20.13	100.0
Շաքարավազ	0.41	49.78	49.82	100.0
Սուրճ, թեյ, կակաո	26.33	39.00	34.67	100.0
Հրուշակեղեն	5.20	38.66	56.14	100.0
Այլ մթերքներ	8.45	26.24	65.31	100.0
Ոչ ոգելից խմիչք	10.47	32.64	56.89	100.0
Ոգելից խմիչք և ծխախոտ	1.70	49.02	49.29	100.0
Ոչ պարենային ապրանքներ	0.19	35.82	63.33	100.0
Հագուստ և գործվածք	8.18	30.93	60.89	100.0
Կոշկեղեն	0.20	52.76	47.04	100.0
Վառելիք	0.00	32.63	67.37	100.0

Կահույք	2.56	43.04	54.40	100.0
Գորգեղեն	1.16	26.86	71.98	100.0
Տեքստիլեղեն	0.60	36.12	63.29	100.0
Կենցաղային էլեկտրաապրանքներ	1.46	23.44	75.10	100.0
Խոհանոցային սպասք	5.77	16.22	78.01	100.0
Լվացող միջոցներ	3.94	39.86	56.20	100.0
Շինանյութեր	1.00	41.75	57.24	100.0
Այգեգործական ապրանքներ	2.09	53.12	44.79	100.0
Ղեղամիջոցներ	0.23	27.86	71.91	100.0
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	0.29	37.01	62.70	100.0
Մշակույթի ապրանքներ	0.34	47.86	51.80	100.0
Գրենական պիտույքներ	0.42	29.34	70.24	100.0
Գեղահարդարման ապրանքներ	1.24	20.16	78.60	100.0
Ոսկերչական ապրանքներ	0.60	27.88	71.52	100.0
Անձնապիտո ապրանքներ	0.36	35.60	64.05	100.0
Ծառայություններ	11.1	56.23	32.62	100.0
Կենցաղային բնույթի ծառայություններ	0.2	35.2	64.6	100.0
Այլ կենցաղային ծառայություններ	0.3	35.4	64.3	100.0
Բնակարանային, կոմունալ ծառայություններ	0.2	52.7	47.1	100.0
Բուժսպասարկման ծառայություններ	20.7	26.2	53.1	100.0
Տրանսպորտի ծառայություններ	3.4	43.0	53.6	100.0
Կապի ծառայություններ	11.5	27.9	60.7	100.0
Մշակույթի ոլորտի ծառայություններ	0.4	35.2	64.4	100.0
Կրթության համակարգի ծառայություններ	0.8	87.7	11.5	100.0
Հանգստի կազմակերպման ծառայություններ	2.1	38.5	59.4	100.0
Հանրային սննդի ծառայություններ	6.1	21.8	72.0	100.0
Իրավական և բանկային ծառայություններ	5.3	28.7	66.0	100.0

Սպառողական զների ինդեքսների տատանողականությունն ուսումնասիրվել է նաև յուրաքանչյուր ապրանքախմբի ամսական զների ինդեքսների տատանման գործակիցների օգնությամբ:

Գծապատկերում արտացոլված են ՍԳԻ-ի և ապրանքախմբերի տատանողականության գործակիցների դինամիկաները, որոնք շատ նման են:

ՍԳԻ, պարենային ապրանքների, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների զների ինդեքսների տատանողականության գործակիցները 2006 – 2010 թթ. չորրորդ եռամսյակներում



Ըստ ստորև ներկայացված աղյուսակի տվյալների՝ 2010թ. չորրորդ եռամսյակում, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատությամբ, ՍԳԻ տատանողականության գործակիցը 0.7%-ից նվազել է 0.4%: Նվազել են պարենային ապրանքների գների ինդեքսի և ոչ պարենային ապրանքների գների ինդեքսի տատանողականությունները՝ համապատասխանաբար 1.4%-ից դառնալով 1.0% և 0.5%-ից՝ 0.4%: Միևնույն ժամանակ, աճել է ծառայությունների սակագների ինդեքսի տատանողականությունը՝ 0.2%-ից՝ 0.3%:

Համեմատաբար մեծ տատանողականություն ունեն «Կաթնամթերք», «Ձուլ», «Միրգ», «Բանջարեղեն և կարտոֆիլ» ենթաապրանքախմբերի գները: 2010թ. չորրորդ եռամսյակում կտրուկ ավելացել է «Կաթնամթերք» ենթաապրանքախմբի գների տատանողականությունը (2009թ. չորրորդ եռամսյակի 0.1%-ից դառնալով 5.4%):


Գների ամսական ինդեքսների տատանման գործակիցները 2006, 2007, 2008, 2009 և 2010 թթ. 4-րդ եռամսյակներում (%)

Անվանում	IV եռ. 06	IV եռ. 07	IV եռ. 08	IV եռ. 09	IV եռ. 10
ՍԳԻ (նախորդ ամսվա նկատմամբ)	0.7	1.7	0.3	0.7	0.4
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	1.3	3.2	0.8	1.4	1.0
Հացամթերք	0.1	4.2	2.4	0.0	1.4
Սաամթերք	0.6	0.1	0.7	0.5	1.1
Չկնամթերք	7.4	12.2	5.1	5.5	3.8
Կաթնամթերք	0.1	0.8	0.9	0.1	5.4
Ձուլ	1.8	0.5	0.3	1.2	5.7
Կենդանական և բուսական յուղ	0.3	7.8	2.1	0.8	2.3
Միրգ	6.5	10.8	3.8	10.3	6.1
Բանջարեղեն և կարտոֆիլ	10.6	4.5	4.5	10.0	14.7
Շաքարավազ	0.7	2.9	0.7	2.2	1.4
Սուրճ, թեյ, կակաո	0.4	0.1	0.4	0.1	0.2
Հրուշակեղեն	0.1	1.9	0.2	0.5	0.1
Այլ մթերքներ	0.0	0.5	0.3	0.3	0.1
Ոչ ոգելից խմիչք	0.0	1.9	0.2	0.1	0.2
Ոգելից խմիչք և ծխախոտ	0.1	0.0	0.1	0.1	0.0
Ոչ պարենային ապրանքներ	0.3	0.8	0.7	0.5	0.4
Հագուստ և գործվածք	0.5	1.9	0.4	0.8	0.5
Կոշիկեղեն	0.3	1.2	1.0	0.4	2.8
Վառելիք	1.3	0.1	0.2	0.8	0.9
Կահույք	0.2	0.2	0.2	0.1	0.2
Գորգեղեն	0.0	0.0	0.1	1.9	0.2
Տեքստիլեղեն	0.0	1.3	0.2	0.1	0.5
Կենցաղային էլեկտրաապրանքներ	1.0	0.2	0.2	0.4	0.2
Խոհանոցային սպասք	0.3	0.0	0.6	0.1	0.0
Լվացող միջոցներ	0.3	0.1	0.2	0.5	0.1
Շինանյութեր	0.2	0.6	0.3	0.9	0.3
Այգեգործական ապրանքներ	0.2	0.3	0.0	0.8	0.1
Դեղամիջոցներ	0.1	0.6	0.0	0.9	0.2
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	1.0	1.8	3.7	2.2	0.9
Մշակույթի ապրանքներ	1.7	1.3	0.1	1.0	2.3
Գրենական սխտույթներ	0.2	0.2	0.4	1.8	0.0
Գեղահարդարման ապրանքներ	1.2	0.1	0.2	0.3	0.2
Ոսկերչական ապրանքներ	0.1	0.2	3.2	0.4	3.4
Անձնապիտո ապրանքներ	1.8	0.1	0.3	0.2	0.0
Ծառայություններ	0.2	0.5	0.9	0.2	0.3
Կենցաղային բնույթի ծառայություններ	0.9	1.3	0.6	0.5	0.0
Այլ կենցաղային ծառայություններ	1.1	1.6	0.7	0.4	0.0
Բնակարանային, կրմունայլ ծառայություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0
Բուժապասարկման ծառայություններ	1.1	0.0	2.8	0.5	0.4
Տրանսպորտի ծառայություններ	0.7	0.4	2.1	1.0	1.6
Կապի ծառայություններ	0.0	0.1	0.0	0.1	0.0
Մշակույթի ոլորտի ծառայություններ	0.6	4.1	0.8	0.9	0.2
Կրթության համակարգի ծառայություններ	0.4	3.5	0.5	0.1	0.0
Հանգստի կազմակերպման ծառայություններ	0.2	1.9	0.1	0.1	1.9
Հանրային սննդի ծառայություններ	0.1	0.3	0.2	0.0	0.0
Իրավական և բանկային ծառայություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0

2.2. ԳՆԱԾԻ ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

2010 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում գրանցվել է 4.5% գնաճ, որի պարագայում տարեվերջին 12-ամսյա գնաճը կազմել է 9.4%՝ գերազանցելով նպատակային միջակայքի վերին սահմանագիծը 3.9 տոկոսային կետով: Արձանագրված բարձր գնաճի միայն 7.5 տոկոսային կետը ձևավորվել է պարենային ապրանքների գների (ներքին գյուղատնտեսական ապրանքների գների աճի հաշվին՝ շուրջ 5 տոկոսային կետ և ներմուծվող պարենային ապրանքների գների աճի հաշվին՝ ավելի քան 2 տոկոսային կետ) աճի հաշվին: Այն, որպես առաջարկի շուկ, դրսևորվել և պահպանվել է տարվա երկրորդ կիսամյակում, որին չորրորդ եռամսյակում արդեն գումարվել են ձևավորված և աստիճանաբար ուժգնացող երկրորդային ազդեցություններն ու գնաճային սպասումները: Վերջինիս հետևանքով չորրորդ եռամսյակի ընթացքում 12-ամսյա բնականոն գնաճն ավելացել է 1.4 տոկոսային կետով՝ տարեվերջին հասնելով 6.3%-ի:

Բնականոն գնաճի և ընդհանուր գնաճի 12-ամսյա շարժերը




Նախորդող 12-ամսյա ժամանակահատվածի, կամ որ նույնն է՝ 2010թ. գնաճային միջավայրը և դրամավարկային քաղաքականության ուղղությունները բնութագրվել են հետևյալ հիմնական առանձնահատկություններով: 2009թ. դեկտեմբերից 12-ամսյա գնաճը սկսել է կտրուկ արագանալ, որին նպաստող հիմնական գործոններն էին 2009թ. երկրորդ կեսից Կառավարության և ԿԲ կողմից իրականացված խիստ ընդլայնողական հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականությունների փոխանցված ազդեցությունը և արտաքին գնաճային ճնշումները՝ պայմանավորված հանքահումքային ու հիմնական պարենային ապրանքների միջազգային գների՝ սպասվածից ավելի արագ աճի տեմպերով, ինչպես նաև հիմնականում բացասական սպասումների պատճառով առաջացող դրամի արժեզրկման ճնշումները:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև սպասվող արտաքին ու ներքին գնաճային ճնշումների ուժգնացումը՝ ԿԲ-ն 2010թ. հունվարին ճշգրտել է հաջորդ մեկ տարվա հորիզոնում գնաճի կանխատեսումներն աճի ուղղությամբ, ընդ որում՝ ժամանակային հորիզոնի ընթացքում այն ունենալու էր նվազող վարքագիծ: Վերջինիս համաձայն կանխատեսվում էր չորրորդ եռամսյակի գնաճի 7.4% մակարդակ:

Միևնույն ժամանակ, ձևավորված և արագացող գնաճային ներուժը վերացնելու և գնաճն իր նպատակային միջակայք վերադարձնելու խնդրից ելնելով՝ ԿԲ-ն տարեսկզբից փոխել էր դրամավարկային քաղաքականության ուղղվածությունը՝ խստացնելով դրամավարկային պայմանները: Այսպես, գնաճի նպատակային թիրախից շեղումները նվազեցնելու առաջնահերթությունից ելնելով՝ տարվա առաջին 5 ամիսների ընթացքում ԿԲ-ն բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը ընդհանուր առմամբ 2.25 տոկոսային կետով՝ դրան զուգընթաց կտրուկ սահմանափակելով ծավալային ընդլայնումը: Դրամավարկային քաղաքականության խստացման պայմաններում Կառավարության և ԿԲ համատեղ ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև տնտեսության ապահովարայնացմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես ապրիլին ԿԲ-ն

փոխել է պարտադիր պահուստավորման մեխանիզմը՝ պահանջելով ներգրավված արտարժույթային պարտավորությունների 25%-ի (սեպտեմբերին՝ ևս 25%) դիմաց դրանով պահուստավորման իրականացում, և իրագործել մակրոպրոդեկցիալ այլ միջոցառումներ: Այդ նույն ժամանակահատվածում Կառավարությունն իր հերթին իրականացրել է գնաճի զսպմանն ուղղված միջոցառումների ծրագիր, որի հիմքում դրված էր բյուջետային ծախսերի կրճատումն ու հարկահավաքման ավելացումը: Արդյունքում ԿԲ-ին հաջողվել է 2010թ. փետրվարի 9.4% բարձրակետից երկրորդ եռամսյակի վերջին 12-ամսյա գնաճը իջեցնել մինչև 5.8%-ի:

12-ամսյա գնաճի կանխատեսված ցուցանիշը



Ելնելով գնաճի առաջին կիսամյակի զարգացումներից՝ ապրիլին և հուլիսին ՀՀ ԿԲ-ն կրկին ճշգրտել է իր կանխատեսումները՝ այս անգամ արդեն նվազման ուղղությամբ՝ 2010թ. չորրորդ եռամսյակի համար կանխատեսելով 12-ամսյա գնաճի համապատասխանաբար 6.2% և 5.8% մակարդակներ: Ըստ էության, ակնկալվում էր գնաճը մեղմող գործոնների ազդեցության շարունակումն ունենալու հետագա եռամսյակներում, որի պարագայում պահպանվել էր կանխատեսվող գնաճի նվազող վարքագիծը: Սակայն երրորդ եռամսյակում տեղի ունեցավ 12-ամսյա գնաճի ևս մեկ կտրուկ բռնիք՝ առավելապես պայմանավորված դրսևորված առաջարկի շուկայի պարենային ապրանքների միջազգային գների և տեղական արտադրության գյուղմթերքների գների աճի ազդեցությամբ: Արդյունքում՝ երրորդ, որպես կանոն՝ գնանկումային եռամսյակում գրանցվել է 0.2% գնաճ (վերջին տարիների այդ ցուցանիշը կազմել է միջին հաշվով շուրջ 3.0% գնանկում), և 12-ամսյա գնաճը սեպտեմբերի վերջին հասել է մինչև 8.6% մակարդակի:

Ստեղծված բարձր գնաճային միջավայրում ԿԲ կողմից հոկտեմբերին արված վերջին կանխատեսումները չորրորդ եռամսյակի համար նորից ճշգրտվել են աճի ուղղությամբ՝ 8.1%, որն, այնուամենայնիվ, նախորդ եռամսյակների կանխատեսումների համեմատ ուներ մեկ տարվա հորիզոնում առավել արագ տեմպերով նվազման հետագիծ՝ կանխատեսվող ժամանակահատվածի վերջին ձևավորվելով նպատակային միջակայքի միջնակետին մոտ: Գնաճի բարձր մակարդակի կանխատեսումը հիմնավորված էր նաև Համաշխարհային բանկի պարենի ինդեքսի կտրուկ աճով (օգոստոսի տ/տ 5.5-ից սեպտեմբերին հասել էր տ/տ 14%-ի), որի հետևանքով միջազգային շուկայում պարենային ապրանքների ձևավորված գներն արդեն իսկ բարձր էին համարվում: Այդուհանդերձ, մինչև տարեվերջ կրկին արձանագրվել է Միջազգային պարենի ինդեքսի բռնիքային աճ՝ դեկտեմբերի վերջին հասնելով տ/տ 25.3%-ի: Այդ պարագայում տարեվերջին

12-ամսյա գնաճը գերազանցել է կանխատեսված ցուցանիշը 1.3 տոկոսային կետով՝ կազմելով 9.4%:

Չնայած առկա բարձր գնաճային միջավայրին, երրորդ եռամսյակից մինչև տարեվերջ ԿԲ-ն նպատակահարմար է համարել ձեռնպահ մնալ դրամավարկային պայմանների փոփոխությունից՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, որում գնաճային միջավայրը ձևավորվել է գերազանցապես առաջարկի գործոնների ազդեցությամբ: Հաշվի են առնվել նաև գնաճային միջավայրը մեղմող որոշ գործոններ՝ տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացումը, արտարժութային շուկայի զարգացումները և ներքին պահանջարկի՝ դեռևս գնաճային ճնշումներ չառաջացնող դանդաղ վերականգնումը: Այդուհանդերձ, եթե երրորդ եռամսյակում ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքի գործող մակարդակը բավարար է համարել՝ կանխատեսվող հորիզոնում առաջարկի շուկերով պայմանավորված գնաճի երկրորդային ազդեցությունները և սպասումները չեզոքացնելու համար, չորրորդ եռամսյակում արդեն, հաշվի առնելով գնաճային ֆոնի ուժգնացումը, իր հրապարակումներում հստակ ազդակներ է տվել դրամավարկային պայմանների խստացման անհրաժեշտության վերաբերյալ: Արդյունքում՝ հունիս-դեկտեմբերին ԿԲ-ն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 7.25%:

3. ԳՆԱԾԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ


3.1. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

2010թ. չորրորդ եռամսյակում համաշխարհային տնտեսական աճի տեմպերը կրկին արագացել են՝ նախորդ եռամսյակում դիտարկված որոշակի դանդաղումից հետո: Արդյունքում, հաշվի առնելով տարվա երկրորդ կեսին սպասվածից ավելի բարձր տնտեսական ակտիվությունը և ԱՄՆ տնտեսական քաղաքականության նոր ընդլայնողական նախաձեռնությունը, ԱՄՆ-ն հունվարին վերանայել է համաշխարհային տնտեսական աճի գնահատումները: Նոր կանխատեսումների համաձայն՝ 2010թ. համաշխարհային տնտեսության աճի տեմպերը գնահատվել են 5.0%՝ նախկինում (հոկտեմբերին) կանխատեսված 4.8%-ի փոխարեն: Վերջինս գերազանցում է նախորդ 5 տարիների արձանագրված միջին ցուցանիշը ավելի քան 1.5 տոկոսային կետով: Համաձայն ԱՄՆ գնահատումների՝ 2010 թվականին զարգացող երկրներում արձանագրված գնաճը կազմել է 6.3%, զարգացած երկրներում՝ 1.5%: Ընդ որում, ԱՊՀ երկրների գնաճը 2010 թվականին կազմել է միջին հաշվով 10.0%³: Այս ամենով հանդերձ, համաձայն ԱՄՆ-ի, 2011-12 թթ. համաշխարհային տնտեսական աճի հեռանկարների առումով պահպանվում են նվազման ռիսկերը, որոնք բխում են Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների տարածման, հիմնական առաջատար երկրներում միջնաժամկետ հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացման ուղղությամբ վճռականության բացակայության, հիմնական ապրանքների բարձր միջազգային գների պահպանման և զարգացող երկրներում կապիտալի մեծածավալ ներհոսքի պայմաններում հնարավոր պահանջարկի ընդլայնման և գնաճային միջավայրի ձևավորման նախանշանների առաջացման հանգամանքներից:

Պայմանավորված ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից Ծավալային ընդլայնման երկրորդ փուլի մեկնարկով, Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների սրմամբ, ինչպես նաև Չինաստանում հնարավոր կրճատողական քաղաքականությունների իրականացման սպասումներով՝ սույն եռամսյակում հիմնական ապրանքների միջազգային շուկաներն աչքի են ընկել գների էական տատանողականությամբ, և արձանագրվել են էական գնաճային ճնշումներ:

Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների կրկին սրման ու դրանց տարածման մտավախությունների առկայության պայմաններում ֆինանսական շուկաներում, հատկապես չորրորդ եռամսյակի վերջում, եվրոյի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ զգալիորեն արժեզրկվել է: Սակայն հոկտեմբեր-նոյեմբերին ձևավորված եվրոյի փոխարժեքի բարձր մակարդակի պարագայում վերջինս եռ/եռ արժևորվել է 5.2%-ով՝ կազմելով միջինը 1.36 ԱՄՆ դոլար՝ 1 եվրոյի դիմաց (տ/տ եվրոյի արժեզրկումը կազմել է 8.0%):

Չորրորդ եռամսյակի վերջին եվրոն արժեզրկվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ




2010 թ. չորրորդ եռամսյակում գրանցվել է նավթի միջազգային գների եռ/եռ 13.6 տոկոս աճ, և «Բրենթ» տեսակի հում նավթի մեկ բարելի միջին եռամսյակային գինը կազմել է 86.8 ԱՄՆ դոլար (տ/տ աճը կազմել է 15.8 տոկոս):

³ Ներկայացված է առանց Թուրքմենստանի և Ուզբեկստանի, որոնց տվյալները դեռևս հասու չեն: Ցուցանիշը հաշվարկված է միջին թվաբանական մեթոդով:

Բարձրացել են ինչպես արդյունաբերական, այնպես էլ թանկարժեք մետաղների գները: Լոնդոնի մետաղների բորսայում գնանշվող պղնձի գինը չորրորդ եռամսյակում աճելով եռ/եռ 18.4 տոկոսով կազմել է միջինը շուրջ 8617 ԱՄՆ դոլար՝ տոննայի դիմաց (տ/տ աճը՝ 29.5%), իսկ ոսկու միջին եռամսյակային գինը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 11.6%-ով՝ կազմելով 1370 ԱՄՆ դոլար՝ 1 տրոյական ունցիայի դիմաց (տ/տ աճը կազմել է 24.3%):

Չորրորդ եռամսյակը միջազգային ապրանքային շուկաներում աչքի է ընկել էական գնաճային միջավայրի ծնավորմամբ



Հացահատիկի միջազգային գները, հուլիսից սկսած արդեն ավելի քան 50%-ով աճելուց հետո, չորրորդ եռամսյակում շարունակել են վերելքը՝ արձանագրելով նոր բարձրակետեր: Արդյունքում՝ Չիկագոյի ապրանքահումքային բորսայում հացահատիկի եռամսյակային միջին գինը կազմել է 7.7 ԱՄՆ դոլար՝ մեկ բուշելի դիմաց, ինչը նախորդ եռամսյակի միջին ցուցանիշը գերազանցել է 18.5%-ով, իսկ նախորդ տարվա նույն եռամսյակի ցուցանիշը՝ 38.2%-ով: Ըստ ԱՄՆ Գյուղապետության տնտեսական հոլանվարի գնահատումների՝ 2010/2011 մարքեթինգային տարում սպասվում է մոտ 646 մլն տոննա հացահատիկի բերք՝ նախորդ՝ 2009/2010 տարում գրանցված շուրջ 683 մլն տոննայի փոխարեն: Հացահատիկի համաշխարհային պահանջարկը կանխատեսվում է 665 մլն տոննա, ինչի պարագայում հացահատիկի համաշխարհային պաշարները նախորդ տարվա համեմատությամբ կնվազեն շուրջ 20 մլն տոննայով՝ կազմելով 178 մլն տոննա՝ արտահայտելով մեծամասամբ Ռուսաստանի և ԵՄ պաշարների կրճատումը: Բրնձի միջազգային գինը բարձրացել է 26.6%-ով և կազմել է 14.1 ԱՄՆ դոլար՝ մեկ ամերիկյան ցենտների (45.3 կգ) դիմաց, ինչը ցածր է նախորդ տարվա ցուցանիշից շուրջ 4.9%-ով՝ հիմնականում պայմանավորված 2009թ. վերջին գրանցված կտրուկ գնաճով:

Շաքարավազի գները 2010թ. չորրորդ եռամսյակում բարձրացել են եռ/եռ շուրջ 34.2%-ով, ինչի արդյունքում շաքարավազի միջին եռամսյակային գինը կազմել է 35.6 ԱՄՆ ցենտ՝ ֆունտի դիմաց, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջին ցուցանիշը գերազանցել է 50.4%-ով:

Ստորև ներկայացվում են համաշխարհային տնտեսության մեծ մասը կազմող և ՀՀ հիմնական գործընկեր երկրների՝ ԱՄՆ-ի, Եվրոգոտու երկրների և Ռուսաստանի տնտեսական զարգացումները: Այնուհետև կներկայացվեն տարածաշրջանի հարևան երկրների տնտեսական զարգացումները:

ԱՄՆ-ում տնտեսական աճի տեմպերը 2010 թվականի չորրորդ եռամսյակում արագացել են: Ըստ ԱՄՆ առևտրի դեպարտամենտի տնտեսական վերլուծությունների բյուրոյի նախնական գնահատումների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում չորրորդ եռամսյակում գրանցվել է եռ/եռ տարեկանացված 2.8% տնտեսական աճ (նախորդ եռամսյակում՝ 2.6% աճ): Տնտեսական աճին հիմնական նպաստող գործոններն են սպառողական ծախսերը (2.9 տոկոսային կետ նպաստմամբ) և զուտ արտահանումը, որի նպաստումը 2010թ. առաջին անգամ ունեցել է դրական արժեք (3.4 տոկոսային կետ): Մինչդեռ մասնավոր ներդրումները, 2009թ. առաջին կեսից հետո առաջին անգամ, սույն եռամսյակում նվազել են, ինչի արդյունքում վերջինիս բացասական նպաստումը տնտեսական աճին


կազմել է -3.1 տոկոսային կետ: Պետական հատվածի նպաստումը կազմել է -0.3 տոկոսային կետ:

Ջուտ արտահանման պակասուրդը ՀՆԱ-ում 2010թ. չորրորդ եռամսյակում զգալիորեն բարելավվել է՝ կազմելով 3.3% (նախորդ եռամսյակում՝ 3.7%): Այս ցուցանիշը, այնուամենայնիվ, դեռևս բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված 3.0% արժեքից: Ջուտ արտահանման ցուցանիշի բարելավումը հիմնականում պայմանավորվել է ներմուծման ծավալների նվազմամբ (չնայած ներմուծման զների զգալի աճի հետևանքով արժեքային արտահայտությամբ փոքր աճին):

2010 թվականի չորրորդ եռամսյակում ԱՄՆ-ում արձանագրված միջին եռամսյակային գնաճը կազմել է տ/տ 1.3 տոկոս (նախորդ եռամսյակում՝ տ/տ 1.2 տոկոս): Արդյունքում՝ 12-ամսյա գնաճը 2010թ. վերջին կազմել է 1.5 տոկոս: Չորրորդ եռամսյակում գնաճային միջավայրի ձևավորմանը հիմնականում նպաստել է վառելիքի և էներգիայի, պարենային ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գների աճը:

2010թ. չորրորդ եռամսյակում ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը շարունակել է պահպանել քաղաքականության նպատակային տոկոսադրույքը 0-0.25 տոկոս միջակայքում: Միևնույն ժամանակ, հինգ ընդունելով ԱՄՆ տնտեսության և զբաղվածության վերականգնման դանդաղ տեմպերը և տնտեսական զարգացման հեռանկարների վերաբերյալ մտավախությունները՝ ԱՄՆ Ֆեդերալ պահուստային համակարգը նոյեմբերին հայտարարել է Ծավալային ընդլայնման քաղաքականության նոր մեկնարկի մասին (600 մլրդ ԱՄՆ դոլար ծավալով):


ԱՄՆ-ում 2010թ. չորրորդ եռամսյակում տնտեսական աճի տեմպերն արագացել են



Համաձայն Եվրոստատի նախնական գնահատումների՝ **Եվրոգոտում** 2010թ. չորրորդ եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ գրանցվել է 0.3% տնտեսական աճ: Նման պայմաններում չորրորդ եռամսյակում պահպանվել է տ/տ տնտեսական վերականգնման համեմատաբար կայուն տեմպը՝ կազմելով 2.0% (նախորդ եռամսյակում՝ եռ/եռ և տ/տ աճերը կազմել են համապատասխանաբար 0.3% և 1.9%):

Սպառողական գների ինդեքսը 2010թ. չորրորդ եռամսյակում միջինում աճել է տ/տ 2.0 տոկոսով (նախորդ եռամսյակում արձանագրվել էր 1.7 տոկոս գնաճ): Եվրոպական կենտրոնական բանկը չորրորդ եռամսյակի ընթացքում տնտեսական վերականգնման դանդաղ տեմպերի պայմաններում պահպանել է տոկոսադրույքները նույն՝ 1.0% մակարդակում:

Չորրորդ եռամսյակում Եվրոգոտում կրկին սրվել են պարտքային հիմնախնդիրները, ու թեև հետագա խնդիրների տարածումը կանխելու նպատակով նոյեմբերի վերջին ԵՄ ֆինանսների նախարարները հաստատեցին ԱՄՅ հետ համատեղ 85 մլրդ Եվրո ընդհանուր ծավալով Իռլանդիային աջակցության փաթեթի տրամադրման որոշումը, այնուամենայնիվ Եվրոգոտում մյուս խոցելի երկրներում հնարավոր հիմնախնդիրների տարածման և սրման մտավախությունների ռիսկերը դեռևս պահպանվում են:



Ռուսաստանի տնտեսության աճի տեմպերը, նախորդ եռամսյակում արձանագրված դանդաղումից հետո, վերականգնվել են: Չորրորդ եռամսյակում արձանագրվել է տ/տ 4.9% իրական ՀՆԱ աճ (նախորդ եռամսյակում՝ տ/տ 2.7%), իսկ 2010թ. ավարտվել է 4.0% իրական ՀՆԱ աճով:

Արդյունաբերության աճը չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 6.5%, տարվա արդյունքներով՝ 8.2%: Շինարարության ճյուղում արձանագրվել է տ/տ ցածր՝ 0.9% աճ, իսկ 2010թ. արդյունքներով՝ 0.6% նվազում:

Չորրորդ եռամսյակում համաշխարհային և ներքին տնտեսության զարգացումների ներքո ընթացիկ հաշվի հավելուրդը տ/տ նվազել է 1.8 մլրդ ԱՄՆ դոլարով և կազմել 14.3 մլրդ ԱՄՆ դոլար: Վերջինս պայմանավորվել է ապրանքային հաշվեկշռի հավելուրդի նվազմամբ և ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի տ/տ աճով: Երրորդ եռամսյակից սկսված կապիտալի զուտ արտահոսքի ծավալներն ավելացել են, և չորրորդ եռամսյակում արձանագրվել է բավականին բարձր՝ 21.4 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ արտահոսք (նախորդ տարվա նույն եռամսյակում գրանցվել էր 12.0 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք): Ընդ որում՝ բանկերի կողմից զուտ արտահոսքը ընթացիկ եռամսյակում կազմել է 6.3 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ այլ մասնավոր հատվածի կողմից զուտ արտահոսքը՝ 15.1 մլրդ ԱՄՆ դոլար: Վճարային հաշվեկշռի հոսքերի արդյունքում Ռուսաստանի կենտրոնական բանկի արտարժույթային պահուստները չորրորդ եռամսյակում նվազել են 8.6 մլրդ ԱՄՆ դոլարով: 2011թ. հունվարի 1-ի դրությամբ արտաքին պահուստները կազմել են 479.38 մլրդ ԱՄՆ դոլար:

2010թ. չորրորդ եռամսյակի ընթացքում վճարային հոսքերի և միջազգային ֆինանսական շուկաների զարգացումների պայմաններում ռուբլու փոխարժեքի արժեզրկման ճնշումները զսպելու նպատակով Ռուսաստանի կենտրոնական բանկը հանդես է եկել որպես արտարժույթի զուտ վաճառող: Արդյունքում՝ ռուբլու միջին անվանական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ գրեթե պահպանվել է նախորդ եռամսյակի միջինի մակարդակում: ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուբլու տ/տ արժեզրկումը չորրորդ եռամսյակում կազմել է 4.2%, իսկ 2010թ. ընթացքում ռուբլու միջին անվանական փոխարժեքի արժևորումը կազմել է 4.3%:

Գնաճի տեմպերի արագացումը շարունակվել է. գրանցվել է տ/տ 8.3% միջին գնաճ (երրորդ եռամսյակում՝ 6.3%): Գնաճի տեմպերի արագացումը վառ դրսևորվել է դեկտեմբերին, երբ արձանագրվել է 1.1% գնաճ (նախորդ տարվա դեկտեմբերին՝ 0.4%): Չորրորդ եռամսյակում գնաճը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների գների առաջանցիկ աճով: Ոչ պարենային ապրանքների գների աճը նույնպես արագացել է: 2010թ. ընթացքում գնաճը կազմել է 8.8% (նախորդ տարի՝ 8.9%):

Չորրորդ եռամսյակում Ռուսաստանի կենտրոնական բանկը շարունակել է ձեռնպահ մնալ տոկոսադրույքների բարձրացման քաղաքականությունից՝ այդպիսով պահպանելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը դեռևս հունիսի 1-ին սահմանած մակարդակում՝ 7.75%:

Մակրոտնտեսական իրավիճակը հարևան երկրներում⁴

Թուրքիա. Նախորդ եռամսյակների տնտեսական աճի⁵ բարձր տեմպերից հետո (մասամբ պայմանավորված նախորդ տարվա առաջին կիսամյակի խորը տնտեսական անկման ազդեցությամբ) 2010թ. երրորդ եռամսյակում արձանագրվել է 5.5% աճ: Ներքին պահանջարկի աճի տեմպերը (առանց պաշարների) արագացել են, որի արդյունքում դրական նպաստումը տնտեսական աճին կազմել է 10.6 տոկոսային կետ, իսկ թույլ զուտ արտաքին պահանջարկը ունեցել է 4.6 տոկոսային կետով բացասական նպաստում: Մասնավոր սպառման աճը երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 7.6%, մինչդեռ ներդրումների բավականին բարձր՝ տ/տ 31.3% աճ է արձանագրվել:

Տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը շինարարության ծյուղի բարենպաստ զարգացումներն են, ինչն արտահայտվել է շինարարության ծյուղում երրորդ եռամսյակում արձանագրված տ/տ բարձր՝ 24.6% աճով (նախորդ եռամսյակում՝ 21.9%): Մանրածախ և մեծածախ առևտրի ծյուղում աճի տեմպերը դանդաղել են և կազմել տ/տ 7.5%, մինչդեռ վերամշակող արդյունաբերության ծյուղում գրեթե զրոյական աճ է արձանագրվել: Գյուղատնտեսության ծյուղում երրորդ եռամսյակում գրանցվել է տ/տ 0.8% նվազում:

2010թ. չորրորդ եռամսյակում գնաճի տեմպերը փոքր-ինչ դանդաղել են և կազմել տ/տ 7.4%: Այդ թվում՝ սննդի և ոչ ալկոհոլային խմիչքների գների աճը չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 12.1%, ալկոհոլային խմիչքների գների աճը՝ տ/տ 24.3%, իսկ տրանսպորտային ծառայությունների գների աճը՝ տ/տ 6.8%: Նշված զարգացումների արդյունքում տարեվերջին գնաճի ցուցանիշը կազմել է 6.4%, ինչը փոքր-ինչ ցածր է եղել նպատակային ցուցանիշից:

Համաշխարհային շուկայում ցածր տոկոսադրույքները, ներքին վարկավորման բարձր աճի հետևանքով ներմուծման բարձր աճը, կարծաժամկետ կապիտալ ներհոսքի աճը, թույլ արտաքին պահանջարկի հետ մեկտեղ, հանգեցրել են ընթացիկ հաշվի պակասուրդի խորացմանը, ինչը ողջ տարվա ընթացքում առաջնային ռիսկերից մեկն է հանդիսացել: Այսպես՝ 2010թ. հունվար-նոյեմբերին ընթացիկ հաշվի պակասուրդը խորացել է 30.6 մլրդ ԱՄՆ դոլարով և կազմել 41.6 մլրդ ԱՄՆ դոլար: Սա հիմնականում պայմանավորվել է առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճով: 2010թ. հունվար-նոյեմբերին արտահանման աճի տեմպերը բավականաչափ նվազել են և կազմել 9.7%, մինչդեռ ներմուծման մասով գրանցվել է բարձր՝ 30.8% աճ: Նշված ժամանակահատվածում մեծ են եղել կապիտալի ներհոսքի ծավալները՝ 51.3 մլրդ ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 6.8 մլրդ ԱՄՆ դոլար): Բանկային ոլորտում կապիտալի զուտ ներհոսքը հունվար-նոյեմբերին կազմել է 32.9 մլրդ ԱՄՆ դոլար, մինչդեռ այլ մասնավոր հատվածում գրանցվել է կապիտալի 5.2 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ արտահոսք: «Տաք փողերի» զուտ ներհոսքը այս ժամանակահատվածում կազմել է 16.5 մլրդ ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 0.9 մլրդ ԱՄՆ դոլար): Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը նվազել է և 2010թ. հունվար-նոյեմբերին կազմել 6.3 մլրդ ԱՄՆ դոլար: Վճարային հոսքերի արդյունքում Թուրքիայի կենտրոնական բանկի պաշտոնական պահուստները հունվար-նոյեմբերին ավելացել են 11.4 մլրդ ԱՄՆ դոլարով:

Չորրորդ եռամսյակում թուրքական լիրայի միջին անվանական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է եռ/եռ 3.8%-ով, չնայած նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին արժևորման միտումը փոխվել է արժեզրկման: Իսկ 2010թ. չորրորդ եռամսյակում փոխարժեքի տ/տ արժևորումը կազմել է 1.8%:

2010թ. չորրորդ եռամսյակի ընթացքում կապիտալի մեծածավալ ներհոսքի պայմաններում Թուրքիայի կենտրոնական բանկը ձեռնամուխ է եղել բազմակի գործիքների կիրառմամբ դրամավարկային քաղաքականության իրականացմանը: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնականոն գնաճը համահունչ է միջինժամկետ թիրախին,

⁴ Հարևան երկրների տնտեսությունների ուսումնասիրումը կարևորվում է այն առումով, որ ենթարկվելով նույնանման ցնցումների՝ կարող են անուղղակի ազդել Հայաստանի տնտեսության վրա: 1990-ական թվականների ճգնաժամերը ցույց տվեցին, որ ազդեցության անուղղակի ուղիները՝ արտահանման միևնույն շուկաները, վարկավորող միևնույն կազմակերպությունները կամ երկրները, միևնույն ներդրողները և այլն, ավելի ու ավելի մեծ դերակատարում են ունենում տարածաշրջանային տեսանկյունից երկրների տնտեսությունների զարգացումների վրա: Հետևաբար երկրները մշտապես ուշադրություն են դարձնում ոչ միայն գործընկեր, այլ նաև տարածաշրջանային հարևան երկրների մակրոտնտեսական զարգացումներին: Ավելացնենք նաև, որ Իրանը ներառված չէ այն պատճառով, որ վերջինիս թվային տվյալների թերի են, ինչպես նաև ստացվում են բավականին ուշ, երբ կորցնում են իրատարությունը:

⁵ 2010թ. չորրորդ եռամսյակի պաշտոնական տվյալները բացակայում են:

դրամավարկային քաղաքականությունը կարող է կենտրոնանալ ֆինանսական կայունության խնդիրների վրա: Ուստի Թուրքիայի կենտրոնական բանկը դեկտեմբերի սկզբներին մեկ շաբաթական ռեպո տոկոսադրույքները նվազեցրել է 50 բազիսային կետով՝ սահմանելով 6.5% մակարդակում: Միաժամանակ, 100-200 բազիսային կետով (կախված ներգրավված միջոցների ժամկետայնությունից) բարձրացվել է պարտադիր պահուստավորման նորմատիվը:

Ադրբեջանի տնտեսությունում 2010թ. պահպանվել են իրական ՀՆԱ աճի տեմպերը, որը կազմել է 5.0%, ընդ որում՝ ոչ նավթային հատվածում՝ 7.9%⁶: Անվանական ՀՆԱ-ն նախորդ տարվա համեմատ ավելացել է 16.8%-ով, և ՀՆԱ դեֆլյատորը կազմել է 11.3% (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ -18.8%): ՀՆԱ աճի 52.6%-ը բաժին է ընկել արդյունաբերությանը, 5.4%-ը՝ գյուղատնտեսությանը, 7.5%-ը՝ շինարարությանը, 7.9%-ը՝ տրանսպորտին և հեռահաղորդակցությանը, 6.6%-ը՝ մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտին, 11.9%-ը՝ սոցիալական ծառայությունների ոլորտին, 8.1%-ը՝ արտադրանքի և ներմուծման զուտ հարկերին⁷:

2010 թ. նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ Ադրբեջանում գնաճը կազմել է 7.6%, իսկ նախորդ տարվա համեմատ միջին գնաճը կազմել է 5.7%: Ընդ որում՝ միջին գնաճի մակարդակը պայմանավորվել է պարենային ապրանքների 7.2%, ոչ պարենային ապրանքների՝ 2.3% և ծառայությունների գների 4.3% աճով⁸:

2010 թ. Ադրբեջանի առևտրային հաշվեկշիռը եղել է հավելուրդով՝ շուրջ 14.7 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում՝ արտահանումը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 45.1%-ով և կազմել 21.3 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 7.8%-ով և կազմել 6.6 մլրդ ԱՄՆ դոլար⁹: Ադրբեջանի 2010 թ. արտահանման արժեքի 86.5%-ը կազմել է հում նավթը, որը 2009թ. կազմել էր 81.6%¹⁰:

2010 թ. ընթացքում, նախորդ տարվա համեմատ, շուրջ 40.9%-ով աճել է նաև ուղղակի ներդրումների համախառն ներհոսքը: Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը կազմել է շուրջ 3.1 մլրդ ԱՄՆ դոլար, որում առաջատար են Մեծ Բրիտանիան (51.9%), ԱՄՆ-ն (14.9%), Չեխիան (9.0%), Ճապոնիան (7.5%), Նորվեգիան (4.7%), Թուրքիան (3.9%)¹¹:

Ինչպես և նախորդ տարի, 2010 թ. ևս Ադրբեջանի կենտրոնական բանկը իրականացրել է մանաթի փոխարժեքի կայունության պահպանման քաղաքականություն: Արդյունքում՝ 2010թ. հունվար-դեկտեմբերին մանաթի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է ընդամենը 0.65%-ով, իսկ հունվար-դեկտեմբերի միջին փոխարժեքը տ/տ արժևորվել է 0.15%-ով¹²:

Բանկերի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները 2010թ. ընթացքում ավելացել են 9.0%-ով, ընդ որում՝ ազգային արժույթով վարկերի ծավալներն ավելացել են 20.0%-ով¹³: Ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտների վարկավորման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն առևտրի և ծառայությունների (34.2%), էներգետիկայի, քիմիական և բնական ռեսուրսների (15.2%), արդյունաբերության (10.6%) և շինարարության (10.2%) ոլորտները: Այս պայմաններում 2009թ. վերջի համեմատ շուրջ 62.4%-ով (237 մլն ԱՄՆ դոլարով) ավելացել են անհուսալի վարկերի ծավալները: 2010 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ անհուսալի վարկերը կազմել են տնտեսության վարկավորման ծավալների 5.4%-ը (նախորդ տարեվերջին 3.6%)¹⁴:

Զգալիորեն աճել են նաև ազգային արժույթով ավանդների ծավալները. բանկային ավանդների ընդհանուր ծավալներն ավելացել են 24.3%-ով, իսկ դրանցում ազգային արժույթով ավանդների ծավալների աճը կազմել է 34.5%: Արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում նվազել է և 2010 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 21.1%¹⁵:

⁶ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2010թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.1:

⁷ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2010թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.2:

⁸ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2010թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.2:

⁹ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2010թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.2:

¹⁰ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2010թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.2:

¹¹ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2010թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.2:

¹² Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2010թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.2:

¹³ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2010թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.2:

¹⁴ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2010թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.2:

¹⁵ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2010թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.2:

Աղբյուրների կենտրոնական բանկի արտարժույթային պահուստները 2010թ. հունվար-դեկտեմբերին աճել են 24.1%-ով և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 6.4 մլրդ ԱՄՆ դոլար¹⁶:

Վրաստանի տնտեսությունում 2010թ. հունվար-սեպտեմբերին գրանցվել է իրական ՉՆԱ-ի 6.7% աճ: Անվանական ՉՆԱ-ն նախորդ տարվա համեմատ ավելացել է 17.5%-ով, և ՉՆԱ դեֆլյատորը կազմել է 10.2% (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում -1.9%): Նշված ժամանակահատվածում ՉՆԱ ծյուղային կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ են ունեցել արդյունաբերության ոլորտը՝ 18.0%, առևտուրը՝ 16.0%, պետական կառավարման ոլորտը՝ 12.0%, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտը՝ 12.0%, գյուղատնտեսությունը՝ 8.0%, շինարարությունը՝ 7.0%: Արտարժույթի և ներմուծման զուտ հարկերը կազմել են ՉՆԱ 13.6%-ը¹⁷:

2010թ. ընթացքում, նախորդ տարվա համեմատ, Վրաստանում միջին գնաճը կազմել է 7.1%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ գրանցվել է 11.2% գնաճ: Ընդ որում՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ արձանագրվել է կարծաժամկետ, միջինժամկետ և երկարաժամկետ սպառման ապրանքների գնաճ, համապատասխանաբար՝ 15.6%, 0.9% և 4.3%, իսկ ծառայությունների գնաճը կազմել է 0.6%¹⁸: 2011-2013թթ. համար Վրաստանի ազգային բանկը նպատակադրել է 6% գնաճի մակարդակ:

2010թ. ընթացքում արտահանման (\$ՕԲ) ծավալներն ավելացել են 39.7%-ով կամ 449.8 մլն դոլարով, իսկ ներմուծման (ՄԻՖ) ծավալները՝ 16.7%-ով կամ 729.0 մլն դոլարով, այսինքն՝ ապրանքների արտահանման-ներմուծման գործարքների արդյունքում Վրաստանի առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը նախորդ տարվա համեմատ խորացել է 8.6%-ով՝ կազմելով 3512 մլն ԱՄՆ դոլար:

2նայած Վրաստանի տնտեսության վերականգնման նշաններին՝ շարունակում է նվազել օտարերկրյա ուղղակի ներդրումների համախառն ներհոսքը: 2010 թ. հունվար-սեպտեմբերին օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը կազմել է 433.0 մլն ԱՄՆ դոլար, որը տ/տ նվազել է 6.8%-ով: Ի տարբերություն ուղղակի ներդրումների ներհոսքի, 2009թ. համեմատ շուրջ 11.7%-ով ավելացել է արտերկրից դրամական փոխանցումների ներհոսքը: 2010թ. ընթացքում այդ ցուցանիշը կազմել է 939.7 մլն ԱՄՆ դոլար:

Արտարժույթային ներհոսքի կրճատման պայմաններում 2010 թ. ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ վրացական լարիի միջին փոխարժեքը տ/տ արժեզրկվել է 6.4%-ով, իսկ 2009թ. դեկտեմբերի վերջի համեմատ լարին արժեզրկվել է 4.8%-ով: Ազգային արժույթի արժեզրկման ճնշումները զսպելու նպատակով Վրաստանի ազգային բանկը 2010թ. հունվար-դեկտեմբերին ներքին արժույթային շուկայում վաճառել է (զուտ) 153.2 մլն ԱՄՆ դոլար:

Բանկերի կողմից տնտեսության վարկավորման ծավալները 2010 թ. ընթացքում աճել են. այդ ժամանակահատվածում ազգային արժույթով տրամադրված վարկերի ծավալներն ավելացել են 35.1%-ով, իսկ արտարժույթայինը՝ 16.0%-ով: Ընդ որում, ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտների վարկավորման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն առևտուրը (51.3%), արդյունաբերությունը (21.5%) և շինարարությունը (10.7%): Այս պայմաններում շուրջ 14.2 մլն լարիով (7.1 մլն ԱՄՆ դոլար) ավելացել են անհուսալի վարկերի ծավալները, որոնք կազմել են տնտեսության վարկավորման ծավալների 2.7%-ը: Վարկավորման ծավալների աճի հետ մեկտեղ ավելացել է նաև բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալը, ընդ որում՝ ազգային արժույթով ավանդների աճը կազմել է 50.1%, իսկ արտարժույթով ավանդներինը՝ 43.0%: Նախորդ տարվա համեմատ 1.3%-ով նվազել է տնտեսության դոլարայնացման մակարդակը, և 2010 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ արտարժույթային ավանդները կազմել են ընդհանուր ավանդների 72.1%-ը:

Վրաստանի ազգային բանկի արտարժույթային պահուստները 2010 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 2.26 մլրդ ԱՄՆ դոլար, որը գերազանցել է 2009թ. վերջի ցուցանիշը 153.5 մլն ԱՄՆ դոլարով: 2010թ. հունվար-դեկտեմբերին շուրջ 558.0 մլն ԱՄՆ դոլարով ավելացել է նաև Վրաստանի արտաքին պարտքը (առանց պետական երաշխիքների) և դեկտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 3.933 մլրդ ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ 2009 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ այն 3.375 մլրդ ԱՄՆ դոլար էր:

¹⁶ Աղբյուրը՝ http://www.cbar.az/infoblocks/money_reserve_usd/:

¹⁷ Աղբյուրը՝ http://www.nbg.gov.ge/uploads/gdpinglisurad/nominal_gdpqcurrenteng.xls,
http://www.geostat.ge/cms/site_images/_files/english/nad/GDP_2010Q3_Eng.pdf:

¹⁸ Այստեղ և այսուհետ՝ Վրաստանի տվյալների աղբյուրը Վրաստանի ազգային բանկի 2010 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետենն է:

3.2. ՎՃԱՐԱՅԻՆ ՅԱՇՎԵԿՇԻՈՒՄ¹⁹

3.2.1. Ընթացիկ հաշիվ

2010թ. չորրորդ եռամսյակում համաշխարհային և ներքին տնտեսությունների զարգացումների պայմաններում ընթացիկ հաշվի տ/տ բարելավման միտումը շարունակվել է: Եռամսյակի ընթացքում հատկանշական է եղել հիմնական մետաղների միջազգային գների աճի տեմպերի արագացումը, ինչը գերազանցել է սպասումները: Արդյունաբերության ճյուղում բարձր աճի տեմպերի պահպանման պարագայում վերջինս վառ դրսևորվել է արտահանման դոլարային աճի տեմպերի արագացմամբ: Ներմուծման աճի տեմպերի կտրուկ նվազում է արձանագրվել երկրորդ կիսամյակից սկսած, ինչը պայմանավորվել է տնտեսավարող սուբյեկտների բյուջետային սահմանափակման պայմաններում ներմուծման գների աճի տեմպերի արագացմամբ: Դրանական փոխանցումների աճի տեմպերը չորրորդ եռամսյակում արագացել են: Արդյունքում՝ ընթացիկ հաշվի պակասուրդը նվազել է տ/տ 189.4 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 359.3 մլն ԱՄՆ դոլար: 2010թ. ընթացիկ հաշիվը բարելավվել է և կազմել ՅՆԱ մոտ 14.0%-ը՝ նախորդ տարվա 16.2%-ի փոխարեն:

Ապրանքների արտահանման և ներմուծման դոլարային արժեքները չորրորդ եռամսյակում ավելացել են համապատասխանաբար տ/տ 97.4 մլն ԱՄՆ դոլարով (տ/տ 41.9%-ով) և տ/տ 22.1 մլն ԱՄՆ դոլարով (տ/տ 2.4%-ով), որի արդյունքում առևտրային հաշվեկշռի պակասուրդը նվազել է տ/տ 75.4 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 613.8 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման և ներմուծման դոլարային արտահայտությամբ աճը 2010թ. համապատասխանաբար կազմել է 48.8% և 15.0%:

Արտահանման աճի տեմպերի արագացման պատճառը համաշխարհային տնտեսության զարգացումների պայմաններում հիմնական մետաղների գների աճի տեմպերի արագացումն էր ու արդյունաբերության ճյուղում բարձր աճի տեմպերի պահպանումը: Ինչ վերաբերում է ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալներին²⁰, ապա վերջիններիս տ/տ աճը չորրորդ եռամսյակում կազմել է 8.9%, իսկ 2010թ. ընթացքում՝ 12.0%: Արտահանման դոլարային արժեքի աճը²¹ հիմնականում պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Հանքահումքային արտադրանք», «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի համապատասխանաբար 12.1, 10.4 և 5.5 տոկոսային կետ դրական նպաստումներով²²:

Ներքին պահանջարկի աճի շարունակման և ներմուծման գների աճի տեմպերի արագացման պայմաններում չորրորդ եռամսյակում արձանագրվել է ապրանքների ներմուծման դոլարային արժեքի տ/տ ցածր՝ 2.4% աճ՝ հիմնականում պայմանավորված նախորդ տարվա չորրորդ եռամսյակում մեքենասարքավորումների ներմուծման մեծ ծավալներով: Չորրորդ եռամսյակում արձանագրվել է ապրանքների և ծառայությունների իրական ծավալների տ/տ բավականին մեծ նվազում՝ 15.0%՝ պայմանավորված տնտեսավարող սուբյեկտների բյուջետային սահմանափակման պայմաններում ներմուծման գների աճի տեմպերի արագացմամբ:

Ներմուծման դոլարային արժեքի ցածր աճը հիմնականում պայմանավորվել է «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ու «Բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի²³ համապատասխանաբար 2.9 և 1.5 տոկոսային կետ բացասական նպաստումներով: Նշենք, որ «Հանքահումքային արտադրանք» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման աճը (դրական նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.4 և 1.4 տոկոսային կետ) գերազանցել է վերը նշված ապրանքախմբերի ներմուծման նվազումը:

Արտաքին առևտրի աշխարհագրական բաշխվածության առումով դրսևորվել են հետևյալ զարգացումները. ԱՊՀ և Եվրոմիության երկրների հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդը կրճատվել է համապատասխանաբար 27.5 մլն և

¹⁹ 2010թ. չորրորդ եռամսյակի ցուցանիշները 77 4Բ կանխատեսումներն են:

²⁰ Ապրանքների արտահանման և ներմուծման իրական ծավալները 77 4Բ գնահատումներն են:

²¹ Նվազել են բավականին փոքր կշիռ ունեցող երեք ապրանքախմբերի արտահանման ծավալները:

²² Արտահանման և ներմուծման ճյուղային և աշխարհագրական բացվածքը ներկայացված է համապատասխանաբար ՖՕԲ և ՄԻՖ գներով:


²³ Նվազում է արձանագրվել մի շարք ապրանքախմբերի ներմուծման մասով ևս:

13.0 մլն ԱՄՆ դոլարով: Եվրոմիության երկրների շարքում չորրորդ եռամսյակում նշանակալի տեղաշարժեր են տեղի ունեցել. Գերմանիայի հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդն ավելացել է 20.1 մլն ԱՄՆ դոլարով, մինչդեռ Բուլղարիայի և Նիդեռլանդների հետ ձևավորվել է համապատասխանաբար 18.9 մլն ԱՄՆ դոլարի և 27.9 մլն ԱՄՆ դոլարի հավելուրդ: Այլ երկրների շարքում հատկանշական է Իրանի, Թուրքիայի և Չինաստանի հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդի համապատասխանաբար 14.0 մլն ԱՄՆ դոլարով, 10.9 մլն ԱՄՆ դոլարով և 4.9 մլն ԱՄՆ դոլարով աճը: Միաժամանակ նշենք, որ Շվեյցարիայի հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդը բավականաչափ՝ 43.9 մլն ԱՄՆ դոլարով նվազել է²⁴:

Ծառայությունների հաշվեկշռի պակասուրդը չորրորդ եռամսյակի ընթացքում տ/տ նվազել է 15.2 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 79.1 մլն ԱՄՆ դոլար: Վերջինս հիմնականում պայմանավորվել է տրանսպորտային ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի նվազմամբ և զբոսաշրջության հաշվեկշռի հավելուրդի տ/տ աճով: Ծառայությունների արտահանման և ներմուծման տ/տ աճը չորրորդ եռամսյակում կազմել է համապատասխանաբար 15.1% և 3.2%:

Դրամական փոխանցումների²⁵ տ/տ աճի տեմպերը ընթացիկ եռամսյակում արագացել են, ինչը հիմնականում պայմանավորվել է Ռուսաստանի տնտեսության զարգացումների ազդեցությամբ (2010թ. չորրորդ եռամսյակում Ռուսաստանի տնտեսական աճը կազմել է տ/տ 5.6%՝ նախորդ եռամսյակի 2.2%-ի փոխարեն): 2010թ. չորրորդ եռամսյակում սեզոնային արտագնա աշխատողների աշխատուժից եկամուտների զուտ ներհոսքն ավելացել է տ/տ 18.0%-ով և կազմել 188.0 մլն ԱՄՆ դոլար: Վերջինս ավելի քան փոխհատուցել է «Եկամուտ ներդրումներից» հողվածով զուտ արտահոսքը: Արդյունքում՝ «Եկամուտներ» հողվածով արձանագրվել է 52.7 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք, իսկ 2010թ. ընթացքում՝ 173.1 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք: Մասնավոր տրանսֆերտների զուտ ներհոսքը ընթացիկ եռամսյակում ավելացել է տ/տ 21.7%-ով և կազմել 272.0 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2010թ. ընթացքում ավելացել է 15.7%-ով և կազմել 848.2 մլն ԱՄՆ դոլար:

2010թ. IV եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդը տ/տ բարելավվել է



3.2.2. Կապիտալի և ֆինանսական հաշիվ²⁶

2010թ. չորրորդ եռամսյակի ընթացքում կապիտալի և ֆինանսական հաշվով արձանագրվել է 369.4 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք, ինչը փոքր-ինչ գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը: Բոլոր հողվածների գծով, բացառությամբ «Այլ ներդրումներ» հողվածի, գրանցվել է զուտ ներհոսք: Արդյունքում՝ ՀՀ կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվներն ավելացել են 10.2 մլն ԱՄՆ

²⁴ Պայմանավորված է նախորդ տարվա չորրորդ եռամսյակում մեքենասարքավորումների ներմուծման մեծ ծավալներով:

²⁵ 2010թ. չորրորդ եռամսյակում բանկային համակարգի միջոցով արձանագրվել է ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի տ/տ 23.5% աճ, իսկ 2010թ. ընթացքում՝ զուտ ներհոսքի 15.4% աճ:

²⁶ 2010թ. չորրորդ եռամսյակի կապիտալի և ֆինանսական հաշվի բոլոր ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են:


դրվարով: 2010թ. արդյունքներով կապիտալի և ֆինանսական հաշվով արձանագրվել է միջոցների 1.09 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք, իսկ 33 ԿԲ զուտ արտաքին ակտիվների նվազումը տարվա ընթացքում պայմանավորվել է 33 ԿԲ-ում առևտրային բանկերի արտարժուրային ավելցուկային միջոցների նվազմամբ, որն ուղղվել է տնտեսության վարկավորմանը:

Կապիտալ տրանսֆերտների ներհոսքի ծավալները չորրորդ եռամսյակում կազմել են 38.8 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն եռամսյակում՝ 28.6 մլն ԱՄՆ դոլար):

Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը ընթացիկ եռամսյակում կազմել է 320.0 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն եռամսյակում՝ 370.0 մլն ԱՄՆ դոլար): 2010թ. արդյունքներով օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսքի ծավալները պահպանվել են նախորդ տարվա մակարդակին մոտ և կազմել 723.6 մլն ԱՄՆ դոլար: Պետական վարկերի զուտ ներհոսքը 2010թ. չորրորդ եռամսյակում կազմել է 80.4 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն եռամսյակում՝ 228.8 մլն ԱՄՆ դոլար):

2010թ. չորրորդ եռամսյակում մասնավոր հատվածի ԶԱԱ-ն ավելացել է 69.7 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում՝ այլ մասնավոր հատվածի (առանց բանկերի) զուտ արտաքին ակտիվներն ավելացել են 231.9 մլն ԱՄՆ դոլարով՝ բանկային հատվածի զուտ արտաքին ակտիվների 162.2 մլն ԱՄՆ դոլարով նվազման պայմաններում:

2010թ. IV եռամսյակում կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների զուտ ներհոսքը փոքր-ինչ գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը




3.3. ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ, ՓՈՒՆԱՐԺԷՔ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

3.3.1. Տոկոսադրույքներ

2010 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում Կենտրոնական բանկը շարունակել է անփոփոխ պահել հիմնական գործիքի՝ ռեպո համաձայնագրի տոկոսադրույքը՝ 7.25%, ինչի պարագայում լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը պահպանվել է 10.25%, իսկ ԿԲ-ում ներդրված ավանդի տոկոսադրույքը՝ 4.25%: Այդ գործոններն իրենց ազդեցությունն են ունեցել ԿԲ գործառնությունների և բանկերի կողմից ներգրավված ու տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների վրա:


Չորրորդ եռամսյակի ընթացքում ԿԲ-ն շարունակել է յուրաքանչյուր չորեքշաբթի առաջարկել ռեպո համաձայնագրերի կնքում: Արդյունքում՝ իրականացված ռեպո գործառնությունների միջին շաբաթական ծավալը կազմել է մոտ 2.7 մլրդ դրամ՝ 7.44 միջին տոկոսադրույքով: Միաժամանակ, ԿԲ-ն շարունակել է կառուցվածքային գործիքի՝ երկարաժամկետ ռեպոյի կիրառումը, որը եռամսյակի ընթացքում կազմել է մոտ 3.0 մլրդ դրամ՝ 8.19 միջին տոկոսադրույքով:

ԿՔ վերաֆինանսավորման, մշտական հնարավորության գործիքների և միջբանկային ռեպո տոկոսադրույքներ



Շարունակել է ակտիվանալ բորսայական միջբանկային վարկերի շուկան (overnight bursa): Եռամսյակի ընթացքում միջբանկային վարկերի ծավալը կազմել է մոտ 347.1 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի 127.5 մլրդ դրամի փոխարեն, իսկ միջին տոկոսադրույքն աճել է 0.64 տոկոսային կետով՝ կազմելով 4.88%: Դրանով պայմանավորված՝ առևտրային բանկերը Կենտրոնական բանկի հետ լոնքարդային ռեպո գործառնություններ չեն կնքել: Իսկ առևտրային բանկերի կողմից Կենտրոնական բանկում ներդրված ավանդի միջին օրական ծավալը կազմել է 9.5 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի 12.0 մլրդ դրամի փոխարեն:

ԿՔ կողմից իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (մլրդ 77 դրամ)




2010 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում միջբանկային և ներբանկային ռեպո շուկաներում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 208.8 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ նվազելով ընդամենը 1.4 մլրդ դրամով: 2010 թ. ռեպո շուկայի ընդհանուր շրջանառությունը նախորդ տարվա համեմատ կրկնակի աճել է և կազմել 776 մլրդ դրամ, իսկ շուկայական ռեպո տոկոսադրույքը դեկտեմբերին կազմել է 7.84%՝ սեպտեմբերի 7.33%-ի և 2009 թ. դեկտեմբերի 5.79%-ի փոխարեն: Առևտրային բանկերի միջև իրականացված գործառնությունների տեսակարար կշիռն ընդհանուր ծավալում կազմել է 35%՝ նախորդ եռամսյակի 40%-ի փոխարեն: Միջբանկային ռեպո շուկայում դեկտեմբերին միջին տոկոսադրույքը սեպտեմբերի համեմատ աճել է 0.53 տոկոսային կետով և կազմել 7.16%:

Եռամսյակի ընթացքում 33 պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը կազմել է 24.5 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի 21.0 մլրդ դրամի փոխարեն, իսկ տեղաբաշխված ՊԿՊ-ի ընդհանուր ծավալը՝ 24.4 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի 18.2 մլրդ դրամի փոխարեն: 2010 թ. տեղաբաշխված ՊԿՊ ընդհանուր ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 4.4 մլրդ դրամով և կազմել 62.1 մլրդ դրամ:


Չորրորդ եռամսյակում պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային շուկայում նկատվել է տոկոսադրույքների նվազման միտում, որն առավել արտահայտված էր կարճաժամկետ հատվածում, իսկ միջնաժամկետ հատվածում հոկտեմբեր-նոյեմբերին նկատվել է տոկոսադրույքների որոշակի աճ, այնուհետև՝ նվազում: Արդյունքում, դեկտեմբերին պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունը կազմել է 8.35%՝ սեպտեմբերի համեմատ նվազելով 3.14 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը մնացել է անփոփոխ՝ կազմելով 14.08%:

ՊԿՊ և միջբանկային ռեպո տոկոսադրույքներ




Ինչպես ցույց է տալիս եկամտաբերության կորերի ուսումնասիրությունը, ՊՊ երկրորդային շուկայում եկամտաբերությունների նվազում նկատվել է հիմնականում կարճաժամկետ (6 ամսից մինչև 1 տարի) հատվածում: Եկամտաբերության կորի դիրքի փոփոխության գերակշիռ մասը՝ 93%-ը, պայմանավորված է կորի մակարդակի համընթաց (զուգահեռ) տեղաշարժով, որը կազմել է 0.45 տոկոսային կետ՝ ի հաշիվ եկամտաբերությունների նվազման: Կորի թեքության էական փոփոխություն չի նկատվել (0.31-ից 0.32):

Երկրորդային շուկայում դիտվել է տոկոսադրույքների նվազում կարճաժամկետ հատվածում




Բանկային համակարգում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի և ավանդների տոկոսադրույքները դրսևորել են հետևյալ միտումները. չորրորդ եռամսյակում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքները համապատասխանաբար կազմել են 10.23% և 7.31%: Երրորդ եռամսյակի համեմատ ՀՀ դրամով ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքը նվազել է 0.26 տոկոսային կետով, իսկ ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքն աճել է 0.17 տոկոսային կետով: Արդյունքում, ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ավանդների միջին տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 2.92 տոկոսային կետ՝ նախորդ եռամսյակի 3.35-ի համեմատ:

Բանկային համակարգի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքներ



2010 թ. չորրորդ եռամսյակում ՀՀ դրամով տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը կազմել է 19.04 %, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերինը՝ 12.62 %: Երրորդ եռամսյակի համեմատ՝ դրամով վարկերի միջին տոկոսադրույքը գրեթե չի փոխվել, իսկ ԱՄՆ դոլարով վարկերինը նվազել է 0.31 տոկոսային կետով: Արդյունքում, չորրորդ եռամսյակում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի միջին տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 6.42 տոկոսային կետ՝ նախորդ եռամսյակի 6.10-ի համեմատ:

Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներ



ՀՀ դրամով վարկերի ու ավանդների միջին տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 8.81 տոկոսային կետ՝ երրորդ եռամսյակի 8.54-ի փոխարեն, իսկ ԱՄՆ դոլարով վարկերի ու ավանդների միջին տոկոսադրույքների տարբերությունը՝ 5.31 տոկոսային կետ՝ նախորդ եռամսյակի 5.79-ի փոխարեն:


3.3.2. Փոխարժեք

ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին շուկայական փոխարժեքը 2010 թվականի չորրորդ եռամսյակի վերջին, նախորդ եռամսյակի վերջի համեմատ, արժեզրկվել է 0.59 %-ով՝ 361.31 դրամից հասնելով 363.44 դրամի:

Չորրորդ եռամսյակում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին եռամսյակային փոխարժեքը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արժևորվել է 6.56 %-ով՝ 384.40 դրամից հասնելով 360.73 դրամի:


2010 թ. վերջում, նախորդ տարվա վերջի համեմատ, տեղի է ունեցել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի 3.98 %-ով արժևորում:

ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը



Եռամսյակի ընթացքում միջբանկային շուկայում իրականացված գործառնությունների համախառն ծավալը կազմել է 2.537 մլն ԱՄՆ դոլար, ինչը 7.23%-ով ավելի է նախորդ տարվա չորրորդ եռամսյակի գործառնությունների ծավալից (2.366 մլն ԱՄՆ դոլար), իսկ տարեկան կտրվածքով տեղի է ունեցել ծավալների նվազում 3.59 %-ով. 8.585 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն 8.373 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ արժույթային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները (մլն ԱՄՆ դոլար)



Եվրո/ՀՀ դրամ գործառնությունների շուկայում 2010 թ. չորրորդ եռամսյակում տեղի է ունեցել ծավալների աճ: Համախառն ծավալը կազմել է 217.50 մլն եվրո, որը նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ 2.84%-ով ավելի է: Տարեկան կտրվածքով գործառնությունների ծավալը նվազել է 15.9 %-ով և կազմել 809.2 մլն եվրո:

Դրամի առաջարկը կարգավորելու և դրամի փոխարժեքի կտրուկ տատանումները մեղմելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը չորրորդ եռամսյակում ՀՀ բանկերից գնել է 26.9 մլն, վաճառել՝ 38.28 մլն ԱՄՆ դոլար, իսկ տարեկան կտրվածքով առքը կազմել է 122.7 մլն, վաճառքը՝ 192.65 մլն ԱՄՆ դոլար:

2010 թվականի չորրորդ եռամսյակում ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքը եռ/եռ արժեզրկվել է 1.2%-ով: Սա հիմնականում պայմանավորվել է ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին եռամսյակային փոխարժեքի եռ/եռ շուրջ 1.3% արժևորման համեմատ գործընկեր երկրների արժույթների՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ միջինում ավելի բարձր՝ շուրջ 2.5% արժևորմամբ: Ինչ վերաբերում է նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ՀՀ անվանական արդյունավետ փոխարժեքի շուրջ 11.0% արժևորմանը, ապա այն պայմանավորվել է ինչպես ՀՀ դրամի փոխարժեքի շուրջ 6.6% արժևորմամբ, այնպես էլ գործընկեր երկրների փոխարժեքների տ/տ միջին կշռված 4.1% արժեզրկմամբ, ինչու էլ հիմնական դերակատարությունն ունեցել է եվրոյի և ռուսական ռուբլու փոխարժեքների արժեզրկումը (նպաստումը՝ համապատասխանաբար 3.2 և 0.9 տոկոսային կետ):


Անդրադառնալով իրական փոխարժեքների վարքագծին՝ հարկ է նշել, որ ինչպես ՍԳԻ-ով և ԱԳԻ-ով հաշվարկված արտաքին իրական փոխարժեքները, այնպես էլ ներքին իրական փոխարժեքը չորրորդ եռամսյակում հիմնականում կայուն էին, թեև տ/տ արձանագրել է արժևորումներ: Սա հիմնականում պայմանավորվել է միջազգային շուկաներում գների բարձրացման արդյունքում ՀՀ-ում բարձր գնաճի արձանագրմամբ:

Հայաստանում միջին եռամսյակային գնաճը 2010 թ. չորրորդ եռամսյակում տ/տ կազմել է 9.4%, մինչդեռ գործընկեր երկրների միջին կշռված գնաճը տ/տ կազմել է 4.1%: Գործընկեր երկրների միջին կշռված գնաճին մեծ են եղել հատկապես Ռուսաստանի, Ուկրաինայի և Իրանի միջին եռամսյակային բարձր գնաճերի (համապատասխանաբար՝ տ/տ 8.1%, 9.5% և 12.4%) նպաստումները՝ 1.7, 0.7 և 0.7 տոկոսային կետ համապատասխանաբար, ինչպես նաև Եվրոգոտու 0.7 տոկոսային կետով նպաստումը՝ պայմանավորված վերջինիս բարձր կշռով: Այս ամենի արդյունքում՝ ՍԳԻ-ով հաշվարկված իրական արդյունավետ փոխար-

ժեքը 2010 թվականի չորրորդ եռամսյակում արձանագրել է տ/տ էական արժևորում՝ 15.4%՝ նախորդ եռամսյակում գրանցված տ/տ 10.4% արժևորման փոխարեն:

Հարկ է նշել նաև, որ արտադրողների գներով հաշվարկված իրական փոխարժեքը նույն ժամանակահատվածում տ/տ արժևորվել է 16.0%-ով՝ նախորդ եռամսյակում գրանցված մոտ 13.2% արժևորման փոխարեն: Դա մեծապես պայմանավորվել է ՀՀ-ում արտադրողների դրամային գների տ/տ էական աճով:

2010 թ. չորրորդ եռամսյակում իրական և անվանական փոխարժեքները



Չորրորդ եռամսյակում ներքին իրական փոխարժեքն²⁷ արժևորվել է տ/տ 6.5%-ով՝ նախորդ եռամսյակի 9.9%-ի փոխարեն, որը հետևանք է ոչ արտահանելի հատվածի գների՝ արտահանելի հատվածի գների համեմատությամբ գերազանցող աճի²⁸: Ոչ արտահանելի ապրանքների և ծառայությունների գները չորրորդ եռամսյակում տ/տ աճել են 17.3%-ով, իսկ արտահանելի ապրանքների գները՝ 10.1%-ով՝ նախորդ եռամսյակի համապատասխանաբար 18.6 և 8.0%-ի փոխարեն: Արտահանելի ապրանքների գների տ/տ աճը պայմանավորվել է հիմնականում միջազգային գների զգալի աճով, իսկ ոչ արտահանելի հատվածի գների տ/տ աճը՝ հիմնականում 2010 թ. երկրորդ եռամսյակում գազի և ջրամատակարարման սակագների աճով:


3.3.3. Դրամավարկային զարգացումներ

2010 թվականի առաջին կիսամյակի համեմատաբար կայուն մակրոտնտեսական միջավայրը երրորդ եռամսյակում որոշակիորեն փոխվել էր, քանի որ անբարենպաստ բնակլիմայական պայմանների հետևանքով գյուղատնտեսությունում դիտված խոր անկումը դանդաղեցրել էր տնտեսական աճի և արագացրել գնաճի տեմպերը (նպաստել է նաև միջազգային շուկայում այդ ժամանակահատվածում դիտված հացահատիկի, հետագայում նաև մի շարք այլ պարենային ապրանքների գների աճին): Երրորդ եռամսյակում շարունակվել է տնտեսության դադարալուծման մակարդակի նվազումը՝ հիմնականում պայմանավորված պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխությամբ (արտարժույթով ներգրավված միջոցների 50%-ի դիմաց ՀՀ դրամով պահուստավորման իրականացում): Հաշվի առնելով ձևավորված փաստացի միտումները՝ դրամավարկային քաղաքականության չորրորդ եռամսյակի ծրագրով վերանայվել է փողի ագրեգատների աճը նվազման ուղղությամբ՝ պահպանելով արտարժույթային ավանդների համեմատ դրամային ավանդների առաջանցիկ աճի տեմպեր:

²⁷ Ներքին իրական փոխարժեքը հաշվարկվում է ոչ արտահանելի ապրանքների գների հարաբերությամբ արտահանելի ապրանքների գներին:
²⁸ Ոչ արտահանելի և արտահանելի ապրանքների գները հաշվարկվել են սպառողական գների գամբյուղից փորձագիտական դատողությունների միջոցով՝ համապատասխան հատվածների ապրանքների ու ծառայությունների տարանջատմամբ:

Չորրորդ եռամսյակն առանձնացել է դրամավարկային ցուցանիշների ակնկալվող աճի տեմպերի զգալի գերազանցմամբ՝ հիմնականում պայմանավորված տարեվերջին Կառավարության կողմից մեծածավալ ծախսերի իրականացմամբ և տնտեսության վարկավորման՝ սպասվածից ավելի աճով: Այսպես, փողի զանգվածը եռամսյակում ավելացել է 12.5%-ով, իսկ դրամային զանգվածը՝ 14.0%-ով:


2010 թվականի դրամայնացումն արտահայտվել է փողի զանգվածի դրամային բաղադրատարրերի աճի առավել արագ տեմպերով



Միևնույն ժամանակ, ԿԲ կողմից իրականացված ապադրարայնացման միջոցառումների արդյունքում եռամսյակի ընթացքում շարունակվել է տնտեսության դրարայնացման աստիճանի նվազումը՝ 1.7%-ով: Դա արտահայտվել է արտարժութային ավանդների համեմատ դրամային ավանդների համապատասխանաբար 10.6% և 17.0% առաջանցիկ աճով: Շրջանառությունում գտնվող կանխիկ դրամը նույն ժամանակահատվածում ավելացել է 11.9%-ով, ինչն ավելի քան երկու անգամ գերազանցել է նախորդ երկու եռամսյակների միջին ցուցանիշը՝ կազմելով շուրջ 5.0%:

Տնտեսության վարկավորման ցուցանիշի վարքագծում չորրորդ եռամսյակում ևս պահպանվել է տարվա անցած ժամանակահատվածում դրսևորված միտումը, այն է՝ արտարժութային ավանդների համեմատաբար փոքր աճի պարագայում (37.3 մլրդ դրամ) ֆինանսական համակարգի կողմից տնտեսությանը տրամադրվել են մեծածավալ արտարժութային վարկեր՝ 11.0% կամ ավելի քան 53.0 մլրդ դրամի աճ: Արտարժութային վարկավորման հիմնական աղբյուր են ծառայել արտարժութային թղթակցային հաշիվների ավելցուկային միջոցներն ու արտասահմանից ներգրավված վարկային ռեսուրսները: Եռամսյակում դրամով վարկավորումն ավելացել է 8.5%-ով կամ 33.7 մլրդ դրամով, ինչի արդյունքում տնտեսության վարկավորման ծավալների աճը կազմել է 10.1% կամ շուրջ 90.0 մլրդ դրամ:


2010 թվականի ընթացքում մշտապես պահպանվել են արտարժութային վարկավորման աճի բարձր տեմպերը



Չորրորդ եռամսյակում փողի բազայի՝ տարվա նախորդ եռամսյակների զգալի նվազումները փոխարինվել են զգալի աճով՝ 15.8%՝ պայմանավորված հիմնականում տարեվերջին բյուջեի մեծածավալ ծախսումների իրականաց-

մամբ: Դա արտահայտվել է նաև ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի բարձր աճի տեմպերի գրանցմամբ՝ 14.5%, ինչի արդյունքում փողի բազայի դրամային հատվածն ավելացել է ավելի քան 14.0%-ով:

Փողի բազայի վարքագիծն ըստ բաղադրատարրերի




2010 թվականի առանձնահատկությունների՝ տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացման և իրականացված ապադոլարայնացման միջոցառումների արդյունքում 12-ամսյա կտրվածքով ձևավորվել է դրամավարկային ցուցանիշների հետևյալ վարքագիծը. փողի և դրամային զանգվածներն ավելացել են համապատասխանաբար 11.8 և 15.7%-ով, շրջանառությունում եղած կանխիկը՝ 7.7%-ով, դրամային ավանդները՝ 29.0%-ով, արտարժույթային ավանդները՝ 7.0%-ով, իսկ փողի բազան մնացել է գրեթե անփոփոխ՝ նվազելով 0.8%-ով: Այդուհանդերձ, դրամավարկային քաղաքականության խստացման պարագայում անգամ տարվա ընթացքում արձանագրվել են տնտեսության վարկավորման բարձր աճի տեմպեր՝ 26.7%, որն ավելի քան երկու անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը և առավելապես պայմանավորվել ԿԲ-ում բանկերի արտարժույթային թղթակցային հաշիվների ավելցուկային միջոցների և արտերկրից ներգրավված վարկային ռեսուրսների օգտագործմամբ:

Ընթացիկ եռամսյակի վերջին տնտեսության դոլարայնացման մակարդակը (արտարժույթային ավանդներ/փողի զանգված) կազմել է 42.8%՝ նվազելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատությամբ 0.7 տոկոսային կետով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատությամբ՝ շուրջ 2.0 տոկոսային կետով:


Ֆինանսական միջնորդությունը բնութագրող՝ տնտեսության փողայնացման և դրամայնացման գործակիցները տարվա արդյունքներով կազմել են համապատասխանաբար 24.8% և 14.2%: Տարվա ընթացքում արձանագրված բարձր գնաճի պայմաններում փողայնացման գործակիցը նախորդ տարվա ցուցանիշի համեմատությամբ նվազել է 1.8%-ով կամ 0.5 տոկոսային կետով, այն դեպքում, երբ իրականացված ապադոլարայնացման միջոցառումների ազդեցությամբ դիտվել է դրամայնացման գործակիցի փոքր աճ՝ 0.4% կամ 0.1 տոկոսային կետ:

Տնտեսության փողայնացման և դրամայնացման գործակիցներ



Ֆինանսական միջնորդությունը բնութագրող մյուս ցուցանիշներից՝ փողի բազմարկիչը մնացել է գրեթե անփոփոխ՝ կազմելով 1.8, որի պարագայում տ/տ աճը կազմել է 11.2%, իսկ դրամային բազմարկիչը եռ/եռ ավելացել է 9.1%-ով և տ/տ՝ նվազել 1.3%-ով: Դրամային բազմարկչի տարեկան նվազումը պայմանավորված էր ԿԲ կողմից ապադրվարայնացման միջոցառումների ներքո պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխությամբ (ներգրավված արտարժութային միջոցների 50%-ի դիմաց 33 դրամով պահուստավորման իրականացում), որի արդյունքում դիտվել է ԿԲ-ում բանկերի արտարժութային թղթակցային հաշիվների միջոցների նվազում և դրամային թղթակցային հաշիվների միջոցների աճ:

Փողի և դրամային բազմարկիչներ



3.4. ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ ԵՎ ԱՌԱՋԱՐԿ
3.4.1. Համախառն պահանջարկ

Ներքին պահանջարկ

Մասնավոր սպառում և ներդրումներ²⁹. 2010 թվականի չորրորդ եռամսյակում մասնավոր ծախսումներն իրական արտահայտությամբ աճել են շուրջ 2%-ով: Տարվա առաջին կիսամյակի համեմատ տնտեսական աճի տեմպերի դանդաղման պայմաններում թուլացել են մասնավոր ծախսումների աճի տեմպերը: Մասնավոր հատվածի ծախսումների աճը չեզոքացվել է պետական ծախսումների (իրական) շուրջ 11%-ով նվազմամբ³⁰, որի արդյունքում ներքին պահանջարկը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, էականորեն չի փոխվել:

Չորրորդ եռամսյակում մասնավոր ծախսումների կառուցվածքում մասնավոր սպառումն իրական արտահայտությամբ ավելացել է մոտ 3%-ով՝ պայմանավորված մասնավոր հատվածի իրական եկամուտների փոքր աճով և սպառողների վստահության վերականգնմամբ:

Տնտեսությանը տրամադրվող վարկերի ծավալների և կազմակերպությունների սեփական միջոցների աճով պայմանավորված՝ ավելացել են կազմակերպությունների կողմից մեքենասարքավորումների ձեռքբերումը և շինարարության իրականացումը: Շինարարության ճյուղի իրական աճի պարագայում նախորդ տարվա համեմատ տնտեսությունում էականորեն չեն փոխվել մասնավոր հատվածի կողմից իրականացված ներդրումների ծավալները:

Նշված զարգացումների մասին են վկայում նաև 33 ԿԲ կողմից հաշվարկվող և հրապարակվող բաղադրյալ տնտեսական ինդեքսները³¹: 2010 թվականի չորրորդ եռամսյակում սպառողների վստահության ինդեքսն աճել է 8%-ով, ընդ

²⁹ Մասնավոր սպառման և ներդրումների իրական աճի չորրորդ եռամսյակի ցուցանիշները 33 ԿԲ գնահատումներն են: Նշված ցուցանիշների փաստացի թվերը 2010 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ են: Ենթաբաժնում ներկայացված իրական աճի գնահատված ցուցանիշները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:


³⁰ Պետական ծախսումների իրական նվազումն արձանագրվել է պետական ծախսումների դեֆլյատորի բարձր մակարդակի պայմաններում:

³¹ Տե՛ս http://www.cba.am/CBA_SITE/statistics/complex_index.html?__locale=hy.

որում, ընթացիկ պայմանների ինդեքսն աճել է 6.8%-ով, իսկ ապագա պայմանների ինդեքսը՝ 8.7%-ով: Տնտեսական ակտիվության և գործարար միջավայրի ինդեքսներն ավելացել են համապատասխանաբար 14.5% և 7.7%-ով:

Թեև չորրորդ եռամսյակի ընթացքում մասնավոր ծախսումներն ավելացել են, սակայն գնաճի վրա դրանք զսպող ազդեցություն են ունեցել: Այսպես, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ մասնավոր իրական ծախսումների գնահատված մակարդակը ցածր էր պոտենցիալ մակարդակից 0–1%-ով: Դա գնանկումային ճնշումներ է առաջացրել սպառողական շուկայում՝ նվազեցնելով գնաճը 0.2 - 0.4 տոկոսային կետով:

Պետական սպառում և ներդրումներ³². 2010 թվականի չորրորդ եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի և, հետևաբար, գնաճի վրա, ըստ հարկաբյուջետային ազդակի գնահատված ցուցանիշի, ունեցել է կանխատեսվածից ավելի մեծ՝ 4.5 տոկոսային կետ ընդլայնող ազդեցություն, որը ձևավորվել է եկամուտների՝ 3.8 և ծախսերի՝ 0.7 տոկոսային կետով ընդլայնող ազդակների պայմաններում: Ազդակի շեղումը կանխատեսվածից հիմնականում առաջացել է եկամուտների մասով՝ պայմանավորված բազիսային եռամսյակի նկատմամբ եկամուտների նվազմամբ և ՀՆԱ կանխատեսված մակարդակի նկատմամբ աճի ավելի բարձր ցուցանիշի ձևավորմամբ:




Հատկանշական է, որ առաջին կիսամյակում արձանագրված տնտեսության արագ վերականգնման դրական միտումներն իրենց ազդեցությունն ունեցան նաև պետական բյուջեի եկամուտների հավաքագրումների վրա, ինչի արդյունքում արձանագրվել են եկամուտների գերակատարումներ: Սակայն երկրորդ կիսամյակում տնտեսական ակտիվության դանդաղման պայմաններում, արձանագրվել է եկամուտների հավաքագրման տեմպերի դանդաղում:

Համախմբված բյուջեի հարկային եկամուտների և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով եռամսյակի ընթացքում արձանագրվել է նվազում, որը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ կազմել է 3.1%: Ընդ որում, հարկային եկամուտների կառուցվածքում անուղղակի հարկերի աճը կազմել է շուրջ 1%, ինչը հիմնականում ակցիզային հարկի աճի շնորհիվ է, իսկ ուղղակի հարկերի տ/տ աճը կազմել է 6.1%: Ուղղակի հարկերի կառուցվածքում աճ է արձանագրվել բոլոր հարկատեսակների մասով, մասնավորապես՝ շահութահարկի մասով աճը կազմել է 2.5%, իսկ եկամտահարկի աճը՝ 8.8%: Այլ եկամուտների մասով արձանագրվել է նվազում՝ 9.3%:

³² Հարկաբյուջետային հատվածի վերլուծությունը կատարվել է չորրորդ եռամսյակի նախնական փաստացի ցուցանիշների հիման վրա (ներառյալ ԾԻԳ-երի միջոցները)՝ կազմված համախմբված բյուջեի ցուցանիշներով: Ընդ որում, 2010 թվականին հարկաբյուջետային ազդակի ցուցանիշները գնահատվել են 2008 թվականի համախմբված բյուջեի ցուցանիշների նկատմամբ (դիտարկելով 2008 թվականը որպես բազիսային տարի), քանի որ 2009 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է զգալի առանձնակի ազդեցություն՝ պայմանավորված հակաճգնաժամային միջոցառումների իրականացմամբ: Հարկ է նշել, որ եկամուտների ազդակը հաշվարկվել է անվանական ՀՆԱ փաստացի ցուցանիշի, իսկ ծախսերի ազդակը՝ պոտենցիալ ՀՆԱ գնահատված ցուցանիշի նկատմամբ:


Չորրորդ եռամսյակում ՀՀ բյուջեի ծախսերը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են շուրջ 4 %-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերն ավելացել են տ/տ 2.2%-ով, որտեղ պետական սպառումը տ/տ աճել է 7.3%-ով: Ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» հոդվածի գծով ծախսերը նվազել են 20.2%-ով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Կառավարության կողմից նախորդ տարվա երկրորդ կեսից իրականացվել է ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականություն, ինչի արդյունքում զգալի աճ է արձանագրվել հատկապես կապիտալ ծախսերի գծով:

ՀՀ բյուջեի ծախսերի մեջ 2010 թվականի չորրորդ եռամսյակում նվազում արձանագրվել է հիմնականում կապիտալ ծախսերի գծով



Հատկանշական է, որ «Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» հոդվածի գծով ծախսերի կառուցվածքում ներքին ֆինանսավորման աղբյուրների կշիռն աճել է, իսկ արտաքին ֆինանսավորման աղբյուրներինը նվազել՝ կազմելով համապատասխանաբար 73% և 27%՝ նախորդ տարվա 68% և 32%-ի փոխարեն: Եկամուտների և ծախսերի վերը նշված ցուցանիշների պարագայում չորրորդ եռամսյակում ձևավորված բյուջեի պակասուրդը կազմել է 84.2 մլրդ դրամ կամ տարեկան պակասուրդի 49.6%-ը: Վերջինս 22%-ով ֆինանսավորվել է արտաքին և 78%-ով՝ ներքին աղբյուրների հաշվին: Ընդ որում, արտաքին աղբյուրների մեջ 10.2 մլրդ դրամ կազմել է ԱՄՆ կողմից ստացված բյուջետային աջակցության վարկի մասնաբաժինը, իսկ ներքին աղբյուրների մեջ 14.7 մլրդ դրամը կամ ներքին աղբյուրների 22.5 %-ը՝ պետական արժեթղթերից ստացված զուտ եկամուտը:

2010 թվականի չորրորդ եռամսյակում բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում գերակշռել է այլ ներքին աղբյուրներից ֆինանսավորումը



Ամփոփելով տարվա արդյունքները՝ նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների զգալի աճ: Մասնավորապես՝ հարկային եկամուտների և սոցիալական ապահովության վճարների աճը կազմել է 11.8%: Ինչ վերաբերում է պետական ծախսե-

րին (ԾԻԳ-երի միջոցները ներառյալ), ապա այն ավելացել է 1%-ով: Տարվա արդյունքում բյուջեի պակասուրդը կազմել է 173.2 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրվածի նոտ 89.6 %-ը:

Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների աճը 2009 և 2010 թվականների երկրորդ եռամսյակներում (իրական արտահայտությամբ)

Ցուցանիշներ	2009 IV/ 2008 IV	2010 IV/2009 IV
Իրական ՀՆԱ	-8.4	4.4
Ներքին պահանջարկ	-5.4	-0.2
Սպառում	-1	2.4
Պետական	1.9	0.7
Մասնավոր	-1.4	2.7
Կապիտալ ներդրումներ	-13.8	-5.9
Պետական	30.0	-32.2
Մասնավոր	-19	-0.9
Արտահանում ³⁵	-9.8	8.9
Ներմուծում	-19.4	-15.0

3.4.2. Համախառն առաջարկ³⁴

2010 թվականի չորրորդ եռամսյակում տնտեսական աճի տեմպերի արագացման պարագայում հունվար–դեկտեմբերին արձանագրված տնտեսական աճը, ինչպես և ակնկալվում էր³⁵, կազմել է տ/տ 2.6%: Իսկ անվանական ՀՆԱ-ն նույն ժամանակահատվածում ավելացել է տ/տ 13.1%-ով՝ ՀՆԱ-ի դեֆլյատորի տ/տ 10.2% աճի պարագայում: Ընդ որում, երրորդ եռամսյակի համեմատ³⁶ տնտեսական աճի տեմպերի արագացումը հիմնականում արդյունք է գյուղատնտեսությունում անկման տեմպերի նվազման և շինարարության ճյուղում աճի տեմպերի արագացման:

Ինչպես չորրորդ եռամսյակում, այնպես էլ ողջ տարվա ընթացքում տնտեսական աճին մեծապես նպաստել են ծառայությունների և արդյունաբերության ճյուղերը:

Արդյունաբերության ավելացված արժեքը եռամսյակի ընթացքում ավելացել է տ/տ շուրջ 9.1%-ով, որի պարագայում հունվար–դեկտեմբերի աճը կազմել է տ/տ 9.5%:

Ընդ որում, եթե հանքագործական արդյունաբերությունում այդ ցուցանիշը տարվա ընթացքում ավելացել է 24.3%-ով, իսկ մշակող արդյունաբերությունում և ջրամատակարարման ոլորտում համապատասխանաբար 11.5% և 6.7%-ով, ապա էլեկտրաէներգիայի և գազի արտադրություն-բաշխումը նվազել է 10.3%-ով: Վերջինիս կազմում, բնեղեն արտահայտությամբ, էլեկտրաէներգիայի արտադրության ծավալներն աճել են շուրջ տ/տ 14.5%-ով՝ պայմանավորված «գազ-էլեկտրաէներգիայի դիմաց» սխեմայով դեպի Իրան արտահանվող էլեկտրաէներգիայի ծավալների աճով, իսկ գազի արտադրության ծավալները նվազել են շուրջ տ/տ 15.2%-ով³⁷: Վերջինս հիմնականում պայմանավորվել է բնակչության և ջերմաէլեկտրակայանների կողմից գազի սպառման ծավալների կրճատմամբ, որն արդյունք է Հրազդանի ՊՇԷԿ-ի կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների կրճատման և Երևան ՋԷԿ-ում արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման պարագայում գազի միջանկյալ սպառման կրճատման:

³³ Վերաբերում է ապրանքների և ծառայությունների արտահանմանը (ներմուծմանը):

³⁴ Տնտեսության ենթաճյուղերի ցուցանիշները 2010 թվականի հունվար-դեկտեմբերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ են:

³⁵ Տե՛ս «Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 2010 թ. IV եռամսյակ»:

³⁶ Համաձայն ԱՎԾ-ի ճշգրտումների՝ հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի տնտեսական աճը կազմել է տ/տ 1.9%:

³⁷ Աղբյուրը՝ «Հայրուսգազարդ» ՓԲԸ:


Արդյունաբերության ճյուղում արձանագրված աճին համեմատաբար մեծ նպաստում են ունեցել *մետաղե հանքաքարերի արդյունահանումը* (24.7% աճ), *սննդամթերքի*³⁸ (9.7% աճ), *խմիչքների*³⁹ (31.6% աճ), *ծխախոտի* (11.9% աճ), *ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների* (2% աճ), *շինանյութերի* (12% աճ) և *մետաղների* (6.4% աճ) *արտադրությունը*, որոնք համաշխարհային և ներքին տնտեսությունների աստիճանական վերականգնման արդյունք են:

Շինարարության ավելացված արժեքը եռամսյակի ընթացքում աճել է տ/տ շուրջ 9%-ով, որի պարագայում հունվար-դեկտեմբերի աճը կազմել է տ/տ 3.7%՝ հիմնականում պայմանավորված *գյուղատնտեսության* (4.4 անգամ), *մշակող արդյունաբերության* (88.9%), *տրանսպորտի* (24.7%), *ջրամատակարարման* (40%) և *պետական կառավարման* (82.8%) ոլորտներում իրականացված շինարարության ծավալների աճով: Մինչդեռ առավել բարձր տեսակարար կշիռ ունեցող *բնակարանաշինության* ոլորտում, չնայած անկման տեմպերի դանդաղմանը, դեռևս շարունակվում է անկում արձանագրվել (11.4%):

Ինչ վերաբերում է շինարարության ֆինանսավորման աղբյուրներին, ապա *համայնքային բյուջեների* (4 անգամ աճ), *մարդասիրական օգնության* (3.4 անգամ աճ) և *կազմակերպությունների միջոցների* (35.3% աճ) հաշվին իրականացվող շինարարության ծավալների աճը ամբողջությամբ չեզոքացրել է *պետական բյուջեի* (1.7% նվազում), *միջազգային վարկերի* (43.1% նվազում) և *բնակչության միջոցների* (38.5% նվազում) հաշվին իրականացվող շինարարության ծավալների կրճատումները:

Վերոնշյալ զարգացումների արդյունքում հունվար-դեկտեմբերին իրականացված շինարարության շուրջ կեսն ապահովվել է կազմակերպությունների միջոցներով իրականացվող շինարարության հաշվին:

Գյուղատնտեսության ավելացված արժեքը եռամսյակում աճել է տ/տ շուրջ 6%-ով, որի պարագայում հունվար-դեկտեմբերի անկումը փոքր-ինչ մեղմվել է՝ կազմելով տ/տ 13.4%: Դա հիմնականում բուսաբուծության ճյուղի 20.3%-ով նվազման հետևանք է: Ընդ որում, բուսաբուծության արտադրության ծավալների անկումը հիմնականում պայմանավորված է անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով գարնանացանի և աշնանացանի, ինչպես նաև ցանքատարածությունների կրճատմամբ և սակավ բերքի ստացմամբ: Մասնավորապես՝ հացահատիկի, կարտոֆիլի, բոստանային մշակաբույսերի և բանջարեղենի ցանքատարածությունների 7.2%, 11.4%, 27.4% և 1.7%-ով նվազման պարագայում համախառն բերքը կրճատվել է համապատասխանաբար 12.9%, 18.9%, 38.6% և 13.7%-ով:



³⁸ *Սննդամթերքի արտադրության* աճ արձանագրվել է հիմնականում *շաքարավազի* (37.4 անգամ), *ծավարեղենի* (2.1 անգամ), *ալյուրի* (14.8%), *հրուշակեղենի* (14.1%), *մակարոնեղենի* (5.6%), *պաղպաղակի* (15.7%), *թթվասերի* (3.2%), *մածունի* (8.1%) և *բուսական յուղի* (8.4%) *արտադրության* ծավալների աճի հաշվին:

³⁹ *Խմիչքների արտադրության* աճ արձանագրվել է հիմնականում *կոնյակի* (27.9%), *գինու* (14.9%), *գարեջրի* (41.7%), *շամպայնի* (35.5%), *հանքային ջրերի* (17.9%), *աղբյուրի ջրի* (35.1%) և *բնական հյութերի* (56.3%) *արտադրության* ծավալների աճի հաշվին:

Ծառայությունների ավելացված արժեքը եռամսյակում ավելացել է տ/տ շուրջ 2.5%-ով, որի պարագայում հունվար-դեկտեմբերի աճը կազմել է տ/տ 4.6%՝ հիմնականում պայմանավորված *մանրածախ* (աճը ամբողջությամբ արդյունք է խանութների, գյուղատնտեսական արտադրանքի շուկաների առևտրի շրջանառության ծավալների աճի) *և մեծածախ առևտրի՝ համապատասխանաբար* 0.6 % և 12% ծավալների աճով: Միևնույն ժամանակ, մատուցված ծառայությունների ծավալն ավելացել է 3.8%-ով. ընդ որում, արձանագրվել է բոլոր ոլորտներում մատուցված ծառայությունների աճ, իսկ առավել մեծ նպաստում է ունեցել տեղեկատվության և կապի (1.1%), տրանսպորտի (1.7%), ֆինանսական և ապահովագրական գործունեության (3%) ոլորտներում արձանագրված աճը:

3.5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ ⁴⁰

2010 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում աշխատանքի շուկայում արձանագրվել է անվանական աշխատավարձի որոշակի աճ՝ պայմանավորված տնտեսական ակտիվության վերականգնման արդյունքում մասնավոր հատվածի, ինչպես նաև բյուջետային ֆինանսավորում ունեցող որոշ կազմակերպությունների աշխատավարձերի աճով: Տնտեսության շարունակական ակտիվացման պայմաններում գործազրկության աճի տեմպը էականորեն նվազել է՝ նախորդ ժամանակահատվածների ընթացքում արձանագրված նույն ցուցանիշի համեմատ: Տնտեսության վերականգնման գործընթացը հանգեցրել է աշխատանքի արտադրողականության աճի:

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ 2010 թվականի չորրորդ եռամսյակում տնտեսության միջին անվանական աշխատավարձի աճը կազմել է շուրջ 6%: Աշխատավարձի առավել բարձր աճ է արձանագրվել արդյունաբերության, շինարարության և ծառայության ոլորտներում:

Չորրորդ եռամսյակում շարունակվել է տարեսկզբից նկատվող տնտեսության վերականգնման գործընթացը. արդյունքում, աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճի տեմպը դեկտեմբերի դրությամբ կազմել է 27.9%: Այս պայմաններում տնտեսությունում զբաղվածների թվի միջին աճը կազմել է 0.8%, իսկ պաշտոնապես գրանցված գործազրկության միջին եռամսյակային մակարդակը՝ 6.8%՝ նվազելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 0.3 տոկոսային կետով:

Տնտեսական աճի հետևանքով տեղի է ունեցել արտադրողականության մոտ 2% աճ: Նշված զարգացումների արդյունքում մոտ 4%-ով ավելացել են միավոր աշխատուժի ծախսերը, որի հետևանքով տնտեսությունում առաջացել են 0.3 տոկոսային կետ թույլ գնաճային ճնշումներ:

3.6. ՆԵՐՄՈՒԾԱՆ ԳՆԵՐ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԳՆԵՐ

3.6.1. Ներմուծման գներ

2010 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում համաշխարհային ապրանքային շուկաներում շարունակվել են գների աճի միտումները: Սա վերաբերում է ինչպես հիմնական պարենային, այնպես էլ հումքային ապրանքատեսակներին:

Ըստ Կենտրոնական բանկի գնահատումների՝ 2010 թվականի չորրորդ եռամսյակում ներմուծման դոլարային գները գրանցել են տ/տ 20.0 տոկոս աճ (նախորդ եռամսյակում տ/տ աճը կազմել էր մոտ 19.6 տոկոս):

⁴⁰ Աշխատանքի շուկայի չորրորդ եռամսյակի տվյալները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված 2010 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների փաստացի և դեկտեմբերի գնահատված ցուցանիշների վրա: Ենթաբաժնում ներկայացված աճի գնահատականները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

Ցուցանիշներ	IV եռ. 09	I եռ. 10	II եռ. 10*	III եռ. 10*	IV եռ. 10
Ներմուծում (ընդհանուր)	5.2	13.9	16.4	19.6	20.0
Ներմուծում (ծառայություններ)	3.1	10.8	4.9	4.7	6.3
Ներմուծում (ապրանքներ)	5.7	14.8	19.3	23.6	23.6
Կապիտալ ապրանքներ ⁴¹	0.0	0.0	0.0	0.0	0.0
Սպառողական ապրանքներ	3.1	10.8	4.9	4.7	6.3
Հումքային ապրանքներ	-3.7	8.4	35.6	55.2	52.1
Ադամանդ ⁴¹	0.0	0.0	0.0	0.0	0.0
Նավթամթերք	34.2	70.4	33.1	11.8	15.6
Բնական գազ	40.0	40.0	16.9	16.9	16.9


* 2010 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների ցուցանիշները ճշգրտված են:

Դոլարային գների տ/տ աճը պայմանավորվել է հիմնականում հումքային և պարենային ապրանքների, ինչպես նաև նավթամթերքի գների էական աճով: Միայն վերջինիս եռ/եռ աճը կազմել է 13.4 տոկոս՝ նախորդ եռամսյակում գրանցված 2.9 տոկոս անկման փոխարեն:

Հումքային և պարենային ապրանքների դոլարային գները տ/տ ավելացել են 52.1 տոկոսով (նախորդ եռամսյակում աճը կազմել է տ/տ 55.2 տոկոս): Թեև հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է բոլոր հումքային ապրանքների գների աճ, սակայն հիմնականում հացահատիկի և շաքարավազի գների էական բարձրացումներն են պայմանավորել հումքային ապրանքների գների եռ/եռ աճը: Հարկ է նշել, որ տ/տ զգալի աճը հիմնականում պայմանավորված էր ներմուծվող երկաթի հանքաքարի գների՝ դեռևս երկրորդ և երրորդ եռամսյակներում արձանագրված կտրուկ բարձրացումներով, ու թեև հաշվետու տարվա վերջին եռամսյակում դրանք որոշակի անկում են գրանցել, այնուամենայնիվ պահպանվող բարձր մակարդակը պայմանավորում է վերջինիս տ/տ աճի մեծ տեմպերը: Ընդհանուր ներմուծման գների վրա հումքային ապրանքների գներն ունեցել են 16.0 տոկոսային կետ ազդեցություն:

Չորրորդ եռամսյակի ընթացքում նավթամթերքների դոլարային գները արձանագրել են բարձր գնաճ՝ 13.4%, ինչի պարագայում գների տ/տ աճը կազմել է 15.6% (նախորդ եռամսյակի 11.8 տոկոս աճի փոխարեն): Արդյունքում, նավթամթերքների գներն ընդհանուր ներմուծման գների վրա հաշվետու եռամսյակում ունեցել են 1.1 տոկոսային կետ ազդեցություն:

Ներմուծված ապրանքների գների շարժը չորրորդ եռամսյակում պայմանավորվել է հումքային և պարենային ապրանքների գների աճով



Ներմուծվող սպառողական ապրանքների դոլարային գների արձանագրված աճը հիմնականում պայմանավորվել է գործընկեր երկրների բարձր գնաճով (8.9 տոկոսային կետ): Գործընկեր երկրների փոխարժեքների միջինը մոտ 2.6 տոկոս արժեզրկման պարագայում ներմուծվող սպառողական ապրանք-

⁴¹ Կապիտալ ապրանքների և ադամանդի գների գնահատականների բացակայությունը պայմանավորված է դրանց փաստացի խիստ մեծ տատանողականությամբ, այդ իսկ պատճառով գների փոփոխությունը գնահատվում է զրոյական:

ների դոլարային գները 2010 թ. չորրորդ եռամսյակում աճել են տ/տ 6.3 տոկոսով, որն ընդհանուր ներմուծման գների վրա ունեցել է 1.5 տոկոսային կետ ազդեցություն: Չինաստանում գրանցված բարձր գնաճի և չինական արժույթի փոխարժեքի արժևորման արդյունքում՝ դրա նպաստումը ընդհանուր ներմուծման գներին եղել է ամենամեծը 33 հիմնական գործընկերների շրջանում՝ կազմելով 1.0 տոկոսային կետ: Համեմատաբար մեծ նպաստում են ունեցել նաև Ռուսաստանը և Ուկրաինան՝ համապատասխանաբար 0.2 և 0.3 տոկոսային կետ: Այս և մյուս հիմնական գործընկերների՝ ընդհանուր առմամբ դրական նպաստումների ազդեցությունը մասնակիորեն չեզոքացվել է եվրոյի փոխարժեքի տ/տ արժեզրկման հետևանքով եվրոգոտու շուրջ -0.4 տոկոսային կետ նպաստմամբ:

Անդրադառնալով ներմուծված ապրանքների դրամային գներին՝ կարող ենք փաստել, որ միջազգային գների (ներմուծման դոլարային գների) տ/տ 20.0% աճի և 33 դրամ/ԱՄՆ դոլար միջին անվանական փոխարժեքի տ/տ 6.6% արժևորման պայմաններում՝ 2010 թ. չորրորդ եռամսյակում սպառողական զանբյուրում ներառված ներմուծված ապրանքների դրամային գները տ/տ աճել են 7.8 տոկոսով:

3.6.2. Արտադրողների գներ ⁴²

2010 թվականի չորրորդ եռամսյակում ևս տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է գների ինդեքսների աճ, որի արդյունքում ՀՆԱ դեֆլյատորը հունվար-դեկտեմբերին կազմել է տ/տ 110.2%՝ գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 8.9 տոկոսային կետով:

2010 թվականի չորրորդ եռամսյակում ևս տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է գների ինդեքսների աճ, որի արդյունքում ՀՆԱ դեֆլյատորը հունվար-դեկտեմբերին կազմել է տ/տ 110.2%՝ գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 8.9 տոկոսային կետով:

Գների առավել բարձր աճ արձանագրվել է *գյուղատնտեսության* ճյուղում, որտեղ եռամսյակի ընթացքում արձանագրվել է գների⁴³ տ/տ 43.8% աճ, որի պարագայում հունվար-դեկտեմբերի աճը կազմել է տ/տ 32%: Անբարենպաստ եղանակային պայմանների հետևանքով սակավ բերքի ստացման և ցանքատարածությունների կրճատման պատճառով բուսաբուծությունում արձանագրվել է գների 46.4% աճ, որին մեծապես նպաստել է հացահատիկային մշակաբույսերի (29.3%), կարտոֆիլի և բանջարաբոստանային կուլտուրաների (42.4%), մրգի, պտղի և հատապտղի (54.9%) աճը: Անասնաբուծությունում՝ հիմնականում պայմանավորված արտադրության ծավալների կրճատմամբ, մսի գների 32.8% աճի, կաթ և կաթնամթերքի գների 9.4% աճի արդյունքում ենթաճյուղում արձանագրվել է գների 23.5% աճ:

Արդյունաբերության ճյուղում չորրորդ եռամսյակում արձանագրվել է գների տ/տ 14.1% աճ, որի պարագայում հունվար-դեկտեմբերի աճը կազմել է տ/տ 22.6%՝ պայմանավորված հանքագործական արդյունաբերության՝ 27.9%, մշակող արդյունաբերության՝ 19.2% և էներգիայի, գազի արտադրության և բաշխման 21.8% գների աճով: Վերջիններս համապատասխանաբար հետևանք են համաշխարհային շուկաներում 2010 թվականի հունվար-դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գունավոր մետաղների գների բարձր մակարդակի ձևավորման, համաշխարհային և ներքին պահանջարկի աստիճանական վերականգման և 2010 թվականի ապրիլի 1-ից գազի սակագների բարձրացման:


Շինարարությունում արձանագրվել է գների տ/տ 7.3% աճ, արդյունքում հունվար-դեկտեմբերի աճը կազմել է տ/տ 4.2%՝ հիմնականում պայմանավորված շինանյութերի գների աճով:

⁴² Գների ինդեքսների փոփոխությունը 2010 թվականի հունվար-դեկտեմբերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ: Տնտեսության ճյուղերի գների ինդեքսները թողարկման գների ինդեքսներն են:

⁴³ Ներկայացված են գյուղատնտեսական մթերք արտադրողի իրացման գները:

Բեռնափոխադրումների զծով արձանագրվել է գների տ/տ 18.1% աճ, որի պարագայում հունվար-դեկտեմբերի աճը կազմել է տ/տ 17.8%՝ պայմանավորված երկաթուղային (9%), ավտոմոբիլային (2.7%), օդային (5.2%) և խողովակաշարային (32.5%) տրանսպորտի սակագների աճով: Ընդ որում, առավել բարձր՝ խողովակաշարային տրանսպորտի սակագների աճը արդյունք է *գազի սակագների* (2010 թվականի ապրիլի 1-ից գազի սակագների բարձրացում է տեղի ունեցել. 180 ԱՄՆ դոլար՝ նախկին 154 ԱՄՆ դոլարի փոխարեն) բարձրացման:

2010 թ. հունվար-դեկտեմբերին գների առավել բարձր աճ է գրանցվել է գյուղատնտեսության և արդյունաբերության զծով



3.7. Գնաճի սպասումներ

ՀՀ ԿԲ-ն գնաճի սպասումների վերաբերյալ իրականացրել է ֆինանսական հատվածի կազմակերպությունների, տնային տնտեսությունների և իրական հատվածի ոչ ֆինանսական կազմակերպությունների շրջանում 2010 թ. չորրորդ եռամսյակի հարցումները:

Ֆինանսական համակարգում չորրորդ եռամսյակի հարցման արդյունքներով հիմնականում պահպանվել են հետագա 12-ամսյա ժամանակահատվածի համար բարձր գնաճային սպասումները: Այսպես, բանկերի շրջանում գերակշռել են 12-ամսյա գնաճի 5.5-8.5% միջակայքը ընտրողները (66.7%), իսկ վարկային կազմակերպությունների գնաճային սպասումները կրկին փոքր-ինչ չափավոր են և գրեթե հավասար են բաշխվել 5.5-8.5% ու 2.5-5.5% միջակայքերի միջև (39/43%): Այդ ցուցանիշները փաստում են, որ չնայած տարեսկզբից ԿԲ կողմից դրամավարկային պայմանների խստացման պարագայում անցած ժամանակահատվածում 12-ամսյա գնաճի ցուցաբերած նվազողական վարքագծին (բացառությամբ առաջարկի ցնցումների ազդեցությամբ պայմանավորված երրորդ եռամսյակի կտրուկ թռիչքը) և հետագա մեկ տարվա կտրվածքով գնաճի սպասվող նվազման միտումները, չորրորդ եռամսյակում դրսևորված երկրորդային ազդեցություններն ու գնաճային սպասումները իրենց արտացոլումն են գտել նաև ֆինանսական համակարգի սպասումներում:

Հարցման արդյունքներն ակնհայտորեն վկայում են այն մասին, որ տնային տնտեսությունների գնաճային սպասումների վրա չորրորդ եռամսյակում էականորեն ազդել է տարվա երկրորդ կեսից արձանագրված բարձր գնաճին պարենային ապրանքների գերակշռող նպաստման հանգամանքը: Սպառողական գների աճ է սպասում 69.6%-ը՝ նախորդ եռամսյակի 45.4%-ի փոխարեն:

Ըստ հարցման արդյունքների՝ շուկայական տոկոսադրույքների վերաբերյալ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների մեկ տարվա հորիզոնով կանխատեսումները հիմնականում կայուն մակարդակի պահպանման ուղղությամբ են: Այդուհանդերձ, բանկերը ակնկալում են արտարժույթով ավանդների և վարկերի տոկոսադրույքների փոքր-ինչ նվազում: